ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

16 ապրիլի 2024 թվական

2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 13.30

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 19 անդամ՝

Արման Բաբաջանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Նատալյա Սինորյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Դիանա Քերոբյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Անի Խաչատրյան՝ «Հանրապետություն» խմբակցություն,
Միքայել Խաչատրյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Արմենակ Դանիելյան ՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Կիմա Աբրահամյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Հայկ Գրիգորյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Սեդա Տեր-Մինասյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Լուսինե Սարգսյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն:

Առաջին հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, առաջին հարցս վերաբերում է Երևանի ավագանու այսօրվա նիստի ընթացքում ընդունված որոշումներից մեկին, որով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի 250 հաստիք, ովքեր զբաղվելու են բակային տարածքների մաքրման և աղբահանության աշխատանքներով, տեղափոխվում է վարչական շրջանների աշխատակազմերի ենթակայության: Կա մտավախություն, որ գուցե բակային տարածքների կանաչ հատվածների խնամքը դուրս մնա նրանց ուշադրությունից: Ուզում եմ հասկանալ՝ արդյոք վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի ենթակայության տեղափոխվող աշխատակիցները զբաղվելու՞ են նաև բակային տարածքների կանաչ հատվածների խնամքով, թե իրականացնելու են միայն բակերի մաքրման աշխատանքները, իսկ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը շարունակելու է զբաղվել կանաչ տարածքների խնամքով:

Երկրորդ հարցս վերաբերում է շինարարության և բարեկարգման ոլորտին՝ կապված փոսալցման աշխատանքների հետ: Այս տարի եղել են շատ բողոքներ, քննարկումներ՝ փողոցների փոսերի հետ կապված: Քննարկվում էր մի տարբերակ, որ փողոցների ամբողջական սպասարկման համար հայտարարվեր մրցույթ, ոչ թե փոսալցումների համար առանձին: Այսինքն՝ ոչ թե գարնանը հայտարարվի փողոցների ամբողջական սպասարկման մրցույթ, այլ շահող կազմակերպությունն ամբողջ տարվա ընթացքում պատասխանատու լինի փողոցը բարեկարգ պահելու համար: Դիտարկվում է արդյոք նման տարբերակ, եթե ոչ, ապա նախօրոք ի՞նչ կարելի է անել, որ մինչև գարնան սկիզբը կարողանանք կանխել և արագ իրականացնել այդ աշխատանքները:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Նշեմ, որ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկից վարչական շրջաններ տեղափոխվող աշխատակիցներին պայմանական անվանել ենք ունիվերսալ աշխատակիցներ, որոնք բակային տարածքներում պետք է իրականացնեն մի շարք հրատապություն պահանջող աշխատանքներ:

Ներկայումս նախատեսում ենք, որպեսզի այդ աշխատակիցների մի մասը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում ծառերի էտման և

բակերում կանաչ հատվածների խնամքի տարրական գիտելիքներ ստանան, որպեսզի կարողանան, չվնասելով կանաչը, աշխատեն բակերում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն հարցի համար: Ճանապարհների սպասարկման և այլ գործիքակազմ կիրառելու հարցը քննարկվում է, բայց այստեղ հիմնական խնդիրն այն է, որ նախ և առաջ քաղաքապետարանի փոսալցման աշխատանքներն այնպես կազմակերպենք, որ մրցույթները կայանան ժամանակին և գարնան սկզբից մենք ունենանք հաղթող կազմակերպություններ:

Ինչ վերաբերում է եղանակային պայմաններին, ապա, համաձայն գործող նորմերի, միջավայրի ջերմաստիճանը պետք է լինի +5^0 և բարձր, որպեսզի կարողանանք ասֆալտապատման աշխատանքներ իրականացնել: Մենք գտնվում ենք այնպիսի գոտում, որ հաճախ դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսներին, այդ ջերմաստիճանային պայմաններն ուղղակի հնարավոր չէ պահել: Այդ նպատակով այժմ ուսումնասիրում ենք նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը, այսինքն՝ այնպիսի ասֆալտապատման աշխատանքների ծառայություններ ձեռք բերենք, որպեսզի ձնհալին և ցուրտ ամիսներին մեր փողոցները լինեն երթևեկելի վիճակում և ժամանակավոր ասֆալտապատման աշխատանքներն իրականացվեն:

Սա է խնդիրը և ես կարծում եմ, որ հաջորդ տարի խնդիրն այլ մոտեցումներով կփորձենք լուծել և ավելի լավ արդյունքներ կստանանք:

Արման Բաբաջանյան

-Արձագանքեմ պարոն Փամբուխչյանի պատասխանին՝ արդյոք դա ենթադրում է, որ նույն տարածքի համար որոշ կանաչապատման աշխատանքներ պետք է կատարեն նոր աշխատակիցները, իսկ որոշ աշխատանքներ՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցները: Ինչպե՞ս կազմակերպել աշխատակիցների աշխատանքի բաժանումը, որպեսզի բակային տարածքների կանաչ հատվածները չվնասվեն:

Պարոն Հովհաննիսյան, Ձեր պատասխանից ենթադրում եմ, որ ձմռան և գարնան ամիսներին առանձին մրցույթներ է հայտարարվելու:

Լևոն Հովհաննիսյան

-Պարոն Բաբաջանյան, դա դիտարկվող տարբերակներից մեկն է: Եթե վստահ կլինենք, որ ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք թույլ են տալիս ձմռան ամիսներին իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ՝ մասնավորապես Երևանում, /որովհետև մինչ այս պահը նման տեխնոլոգիաներ Հայաստանի Հանրապետությունում չի կիրառվում որևէ տեղ և նման փորձ դեռ չի եղել/, ապա նշանակում է ձմռան ամիսների համար, այսինքն՝ դեկտեմբերից մինչև փետրվար, մենք ծառայություններ կպատվիրենք

կապալառու կազմակերպություններից, դրանից հետո կիրականացնեք դասական ասֆալտապատման աշխատանքները:

Արմեն Փամբուխչյան

-Պարոն Բաբաջանյան, ինչպես նշեցի ներկա պահին տվյալ աշխատակիցները չեն կարող իրականացնել այդ գործառույթը, այսինքն՝ տվյալ գործառույթը շարունակելու է իրականացնել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը: Համապատասխան դասընթացները կազմակերպելուց հետո, կկատարվի աշխատանքի բաժանում և կլինի մեկ պատասխանատու:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նատալյա Սինորյան, խնդրեմ:

Նատալյա Սինորյան

- Շնորհակալություն, հարցս կրկին վերաբերում է Երևան քաղաքում առկա փոսերին: Ցանկանում եմ նշել, որ պարոն Հովհաննիսյանը մինչև ուշ երեկո հետևում է փոսալցման աշխատանքներին: Հարցս հետևյալի մասին է, թե ե՞րբ կավարտվեն Երևանում փոսալցման աշխատանքները և ե՞րբ է այդ գործընթացը նախատեսվում իրականացնել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն հարցի համար: Նշեմ, որ յուրաքանչյուր վարչական շրջանի մասով ունենք գնման ժամանակացույց, համաձայն որի առաջին և երկրորդ եռամսյակներում ընդհանուր ծավալի իրականացումն ակնկալվում է 65%, երրորդ եռամսյակում՝ 25% և չորրորդ եռամսյակում նախատեսում ենք մնացորդային 10%: Այսինքն՝ որոշակի ծավալ պահում ենք, որ ընթացքում, կախված եղանակային պայմաններից կամ ընդհանուր երթևեկելի ճանապարհների մաշվածությունից, կարող են առաջանալ նոր փոսեր:

Ցանկանում եմ նշել, որ վերջին մեկ-երկու տարիներին ճանապարհների երթևեկելի հատվածների վրա մեծ ազդեցություն են ունեցել տարբեր շինարարական ծավալով կատարվող աշխատանքները: Բոլորս գիտենք, որ հիմնականում խոշոր մատակարարների ենթակառուցվածքները գտնվում են երթևեկելի ասֆալտի տակ և տարբեր կառուցապատողներ, այդ թվում նաև հանրային ծառայություն մատուցող կազմակերպություններ՝ մասնավորապես՝ «Գազպրոմ Արմենիա», «Վեոլիա ջուր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունները, թե՛ իրենց ենթակառուցվածքն արդիականացնելու համար, թե՛ առհասարակ նոր կառուցվող բազմաբնակարան շենքերին բաժանորդ դարձնելու համար, երբեմն քանդում են երթևեկելի հատվածն այն պայմանով, որ հետագայում պետք է այդ քանդված հատվածը վերականգնեն: Այստեղ պետք է նշեմ. երբ ասֆալտապատ տարածքի ամբողջականությունը խախտվում է, ինչքան էլ հետագայում

վերականգնում են քանդված երթևեկելի հատվածները, միևնույն է այդ ճանապարհի մասով առաջանում է նորոգման անհրաժեշտություն:

Ինչ վերաբերում է փոսալցման աշխատանքներին՝ տեղեկացնեմ, որ այս տարվա մրցույթով նախատեսված ծավալը 104.000 քմ և այս պահի դրությամբ արդեն 31.512 քմ փոսալցման աշխատանքներն իրականացվել են: Նաև ուզում եմ նշել, որ որոշ վարչական շրջաններում կատարված աշխատանքների ծավալը 50 և 60 տոկոսից ավել է, մասնավորապես՝ Կենտրոն, Նոր Նորք և Արաբկիր վարչական շրջաններում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Առաջին հարցս հնչեցնեմ. հանդիպել եմ Նորքի 17-րդ փողոցի շուրջ 50 սեփականատերերի հետ: Նորքի 17-րդ փողոցում, որը Դավիթ Բեկի փողոցի հարակից տարածքն է, այս պահի դրությամբ «Բիդեք» ՍՊԸ և «Գրին Հիլլս» ընկերությունն իրականացնում են շինարարական աշխատանքներ: Այդ տարածքում «Բիդեք» ՍՊ ընկերության կողմից կառուցվում է 12 հատ 15 հարկանի շենք, «Գրին Հիլլս» ընկերության կողմից՝ 9 հատ 12 հարկանի շենք: Բնակիչները նկատել են, որ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից կառուցվող 2 շենքը չունեն ավտոկայանատեղիներ, անհանգստանում են՝ արդյոք կան շինթույլտվության նորմերից շեղումներ և այս մասով վերահսկողություն կա՞, թե ոչ: Մյուս կողմից կանաչ գոտու պահպանման հարցն է: Նկարի մեջ երևում է, որ կանաչ հատվածը նախատեսված է 40 տոկոս, բայց քանի որ շենքերը բարձրահարկ են և բազմաբնակարան, առաջարկ կա, որ այս դեպքում կանաչ գոտու պահանջը լինի 40 տոկոսից ավել, նույնիսկ՝ 50 տոկոս: Շինարարությունն սկսվել է անցած տարի, սակայն 3-4 տարի առաջ այդտեղ եղել է այլ սեփականատեր և դիմել էին բնակիչներին, թույլտվություններ էին վերցրել 4 հարկանի շենք կառուցելու համար: Այս շինարարության դեպքում՝ նորից բնակիչներից համաձայնություն չէր վերցվել: Արդյոք այդտեղ խախտում չկա և արդյոք նախատեսված են ենթակառուցվածքների կառուցում՝ դպրոց, մանկապարտեզ, գետնանցում, մայթեր:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Քերոբյան: Քաղաքաշինական աշխատանքային խմբում՝ ճարտարապետների հետ, մենք նույնպես քննարկել ենք այս թեման՝ կոնկրետ ոչ թե կանաչ տարածքների տոկոսի վերանայման, այլ կառուցապատման տոկոսի նվազեցման մասով, որն իր հերթին նաև ենթադրում է կանաչ տարածքների ավելի մեծ շրջանակ: Կարծում եմ այդ հարցը կարելի է ավելի համակարգային քննարկել նաև Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահի, քաղաքաշինական խորհրդի անդամների և քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Մենք դեմ չենք այդ մասով փոփոխություններ և վերանայումներ անելուն:

Կխնդրեմ քաղաքապետի խորհրդական Աշոտ Շահբազյանին ուսումնասիրել այս հարցի մանրամասները՝ ե՞րբ են տրվել շինթույլտվությունները, արդյոք ավտոկայանատեղիների, կանաչ տարածքների նորմատիվները պահպանված են, թե ոչ և այդ մասին տեղեկացնել ավագանու անդամին և զեկուցել ինձ:

Ընդհանուր առմամբ պետք է ասեմ, որ կանաչ զանգվածին անդրադարձն իրականացվում է, երբ ավարտական ակտից հետո քաղաքապետարանն արդեն տալիս է նաև շահագործման թույլտվություն: Այդ ժամանակ ծրագիրն ամբողջական ավարտված պետք է լինի, որովհետև ավարտական ակտի համար, որոշակի ավարտվածության տոկոս է նախատեսվում: Շահագործման թույլտվությունը երաշխավորում է իրականացված ծրագրերի ամբողջական և վերջնական համապատասխանությունը նախագծին, որովհետև այդ վերջնական վերահսկողական ֆունկցիան ավարտական ակտով անավարտ էր մնում:

Դիանա Քերոբյան

-Այո՛, պարոն քաղաքապետ, ես տեղյակ եմ այդ նոր շահագործման թույլտվության պահանջից, սակայն եթե շահագործման թույլտվություն չտրվի՝ այստեղ տուժելու են ոչ միայն կառուցապատողը, այլ նաև բնակարան ձեռք բերած սեփականատերերը: Այդ պատճառով խնդրում եմ, ընթացքում վերահսկողություն սահմանել և բարձրահարկերի դեպքում փոփոխել այդ նորմերի դիտարկումները՝ կախված քառակուսի մետրերից և կանաչ տարածքներից:

Այդ տարածքի բնակիչները նաև ասֆալտապատման խնդրի հետ կապված հարց էին բարձրաձայնել: 2018թ. այս խնդրով դիմել են Երևանի քաղաքապետարան, պատասխանվել է, որ ասֆալտապատում իրականացնելու համար այդ հատվածն ամբողջովին պետք է բնակեցված լինի: Նշեմ, որ այստեղ կան շուրջ 50 սեփական տներ, սակայն ճանապարհներն ասֆալտապատված չեն: Նրանք իրենց ուժերով գազաֆիկացման և ջրամատակարարման հարցերն են կարգավորել: Այդ ճանապարհն ընդհանուր առմամբ կազմում է 300-400մ և բնակիչների խնդրանքն է, որպեսզի այդ հատվածն ասֆալտապատվի:

Երկրորդ հարցս վերաբերում է կանաչապատման ոլորտին: Հանձնարարական էր տրվել՝ Մյասնիկյան պողոտայի երկայնքով անտառային գոտի հիմնելու վերաբերյալ: Ցանկանում էի իմանալ ներկայումս ի՞նչ աշխատանքներ են կատարվել և խնդրում եմ ներկայացնել աշխատանքների ժամանակացույցը:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Արմեն Բեգոյան

-Հարգելի՝ տիկին Քերոբյան, տեղեկացնեմ Ձեզ, որ Թ.Կրպեյանի անվան զբոսայգուն հարող բոլոր ապօրինի շինությունները գրեթե ապամոնտաժված են: Շինություններից մեկի վերաբերյալ դատարանի կողմից կասեցում կար, սպասում ենք որոշման ընդունմանը:

Հիմնական 10-ից ավելի ապօրինի շինություն ապամոնտաժված է, նախատեսված 25 հա հատվածում դեռևս կա որոշում՝ դադարեցնել աշխատանքները: Այս պահին սպասում ենք այդ աշխատանքների ավարտին, միայն ավարտից հետո կարող ենք սկսել այդ տարածքի կանաչապատման աշխատանքները:

Դիանա Քերոբյան

-Արձագանքեմ՝ պարոն Բեգոյան, ես տեղյակ եմ քանդման աշխատանքներից, որը կայացավ ս.թ. փետրվարի 29-ին: Դրանից հետո ես չեմ նկատել որևէ աշխատանք: Գիտեմ, որ վերջին հատվածի հետ կապված քննարկումներ են ընթանում և դադարեցված են քանդման աշխատանքները, իսկ կանաչապատման հետ կապված որևէ գործողություն կատարվու՞մ է, թե ոչ:

Արմեն Բեգոյան

-Քաղաքապետարանից կա հանձնարարական՝ դադարեցնել այդ հատվածի քանդման աշխատանքները, այժմ ընթանում են քննարկումներ: Քանդման աշխատանքների ավարտից հետո միայն կարող ենք սկսել ջրագծերի անցկացման, ջրամբարների կառուցման և դրանից հետո՝ կանաչապատման աշխատանքները:

Տիգրան Ավինյան

-Ցանկանում են նշել, որ հանրային տարածքում որևէ մեկի ամառանոցը, առանց որևէ իրավական հիմքի, չի կարող լինել և դրանք տրամաբանական քանդումներ էին: Այս գործելաոճը Երևանի քաղաքապետարանը դեռևս 2022թ., ի լուր աշխարհի, բոլոր գործարարների, բոլոր երևանցիների, հայտարարել է, որ զավթված կանաչ տարածքների դեմ պայքար է մղվելու:

Պարոն Բեգոյան, հաջորդ շաբաթվա ընթացքում կներկայացնեք, թե ինչ հավելյալ քանդման աշխատանքներ կա այնտեղ իրականացնելու՝ ավարտենք և սկսենք կանաչապատման գործընթացը:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-Հնչեցնեմ առաջին հարցը. ինձ՝ որպես Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտի, նաև երաժշտասեր հասարակության և մասնագետների ներկայացուցիչներին շատ մտահոգում է կոնսերվատորիայի շուրջ ծավալվող լուրերն այն մասին, որ կոնսերվատորիան պետք է տեղափոխվի Ակադեմիական քաղաք: Ինձ հետաքրքրում է Ձեր վերաբերմունքն ու դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ, հաշվի առնելով, որ կոնսերվատորիան Հայաստանի երաժշտական մայր ԲՈՒՀ-ն է և, ըստ Ալեքսանդր Թամանյանի նախագծի, Երևանի առանցքային շենքերից մեկն է:

Երկրորդ հարցս վերաբերում է Ալեք Մանուկյան փողոցի հ.6/5 հասցեում գտնվող «Թաուն Երևան» սրճարանին: Հարակից տարածքի շենքերի բնակիչներից բազմաթիվ բողոքներ ունենք, որ սրճարանում հնչող երաժշտությունը չափազանց բարձր է, մանավանդ

ամառային սեզոնին, երբ գործում է բացօթյա տարածքում և բնակիչները չեն կարողանում իրենց տանը հանգիստը վայելել: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվելու այս և նմանատիպ այլ խնդիրների ուղղությամբ, որպեսզի քաղաքացիներն իրենց տանն ունենան իրենց անդորրը:

Տիգրան Ավինյան

-«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծ է դրվել շրջանառության մեջ, որով անդրադարձ է կատարվել շատ հարցերի: Ձեր մատնանշած խնդիրների լուծման մեխանիզմներ են ստեղծված, որով քաղաքապետարանը լիազորություն է ստանում՝ որոշ պահանջների չբավարարելու և պարբերաբար խախտումներ արձանագրելու դեպքում կասեցնել օբյեկտի գործունեությունը: Քաղաքապետարանը պարբերաբար արձանագրում է ժամային և ձայնային չափորոշիչներից խախտումները և տուգանում: Կխնդրեմ քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի ապահովման ծառայության պետ Արամ Գյուլզադյանին, կոնկրետ այդ դեպքն ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն:

Ինչ վերաբերում է Ակադեմիական քաղաքին՝ ես կդժվարանամ մեկնաբանություն տալ այդ հարցի վերաբերյալ, արդյոք կոնսերվատորիան պետք է տեղափոխվի, թե ոչ, բայց կարծում եմ մասնագիտական խումբ կա, ովքեր դրանով զբաղվում են և բոլոր համալսարաններն էլ այդ գործընթացի մեջ ներառված են: Եթե բարեհաջող ընթանա Ակադեմիական քաղաքի ծրագիրը, որը միջազգային մասնագետների կողմից նախագծված բավականին հետաքրքիր ծրագիր է և հնարավորությունը լինելու է մեծ՝ գրեթե բոլոր համալսարանների համար, ես կարծում եմ, որ ինչ-որ փուլում համալսարաններն են ցանկանալու այդ միջավայրում հայտնվել:

Աննա Ավետիսյան

-Արձագանքեմ. Կոնսերվատորիան այն ԲՈՒՀ-ը չէ, որ կարելի է տեղափոխել, կարծում եմ ականջալուր պետք է լինել երաժիշտ մասնագետներին: Կոնսերվատորիան տեղափոխելը փաստացի նշանակում է փակել: Կոնսերվատորիայի շենքը քաղաքի կենտրոնում ի սկզբանե նախագծված է եղել իր բուն նպատակի համար, տեղափոխվելով՝ իմաստը կորում է: Իսկ ինչպե՞ս է նախատեսվում օգտագործել կոնսերվատորիայի շենքը:

Տիգրան Ավինյան

-Քանի որ այս հարցն ուղիղ չի վերաբերում քաղաքապետարանին, կառաջարկեմ այլ ձևաչափով այս քննարկումը ծավալել՝ գործընթացում ներգրավված նախարարության հետ: Կարիք լինելու դեպքում մենք կարող ենք աջակցել:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան:

Գրիգոր Իսկանդարյան

-Հնչեցնեմ առաջին հարցը. 2023թ. սեպտեմբերին Դուք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը, նախընտրական քարոզարշավի ժամանակ այցելել եք Կարեն Մաթևոսյանի բնակարան, որտեղ ապրում էին նրա մայրը և աղջիկը: Կարեն Մաթևոսյանը 2-րդ կարգի հաշմանդամ է, նրա մայրը 2-րդ

համաշխարհային պատերազմի մասնակից է եղել: Հանդիպումը տեսաձայնագրվել է: Նրանք խնդրել էին կացարան և Դուք խոստացել էիք զբաղվել այդ հարցով: Քաղաքացու պնդմամբ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը կանչել է նրան նախընտրական շտաբ, որտեղ նա դիմում է գրել: Որոշ ժամանակ անց Կարեն Մաթևոսյանի աղջիկը զանգահարել է Արտակ Հովակիմյանին և նա ասել է, որ նման դիմում չկա: Տեղեկացնեմ նաև, որ Կարեն Մաթևոսյանը գտնվում է բնակարան ստանալու հերթի մեջ: Ինչպե՞ս է ստացվում, որ քաղաքացու պնդմամբ գրված և վարչական շրջանի ղեկավարին տրամադրված դիմումը չկա:

Երկրորդ հարցը. 2024թ. տեխնիկական հսկողության մրցույթները հաղթում են շատ ցածր գներով, մասնավորապես այն մրցույթները, որոնք կապված են ասֆալտբետոնյա ծածկույթի հետ: Գնիջեցումները կազմում են 90 տոկոս և ավելի: Օրինակ՝ Արաբկիր վարչական շրջանի փողոցների փոսային նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության նախահաշվային արժեքը եղել է 1 մլն 500 հազ. դրամ, իսկ Ա/Ձ Վահրամ Կնյազյանը շահել է 60 հազ. դրամով, կամ Աէրացիա թաղամասի հ.1 շենքի բակի բարեկարգման աշխատանքների տեխնիկական հսկողության նախահաշվային արժեքը եղել է 1 մլն 300 հազ. դրամ, բայց մրցույթը շահել է «Նարեկ-Ալեքս» ՍՊԸ-ն՝ 42 հազ. դրամով: Բոլորս էլ հասկանում ենք, որ 42 հազ. դրամով ընդհանրապես հնարավոր չէ կազմակերպել տեխնիկական հսկողություն: Հավելեմ նաև, որ պայմանագրի տեխնիկական բնութագրի 3-րդ կետի 1-ին մասով, շինարարության սկզբից մինչև ավարտն ընկած ժամանակահատվածում, ամենօրյա ռեժիմով, պետք է լուսանկարահանել շինարարության օբյեկտների վիճակը: Ժամանակացույցով տեխնիկական հսկողության պայմանագիրն ավարտվում է դեկտեմբերին: Այսինքն՝ տեխնիկական հսկողության աշխատակիցները, ովքեր պետք է ստանան գոնե նվազագույն աշխատավարձ, 8 ամիս շարունակ, ամեն օր պետք է գնան շինհրապարակ, ընդամենը 42 հազ. դրամի դիմաց: Ի դեպ այդ 42 հազ. դրամից ընկերությունը պետք է նաև վճարի հարկեր: Կրկին անգամ պնդում եմ, որ 42 հազ. դրամով պատշաճ տեխնիկական հսկողություն իրականացնել հնարավոր չէ, իսկ տեխնիկական հսկողության բացակայության դեպքում աշխատանքները կատարվում են անորակ, ինչին էլ ականատես ենք եղել Երևան քաղաքում՝ բավականին շատ փոսերի առկայությամբ: Ինչու՞ եք թույլ տալիս, որ նման կազմակերպությունները ձախողեն Երևան քաղաքի բարեկարգման աշխատանքները և ինչու՞ չեք ճիշտ կազմակերպում տեխնիկական հսկողության մրցույթները, որ 90 տոկոս և ավել գնիջեցումներ չլինեն: Կարող եմ արդյոք ենթադրել, որ այդ ամենն արվում է միտումնավոր:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Իսկանդարյան, իհարկե եզրահանգման հետ համաձայն չեմ, բայց երկրորդ հարցի էության հետ միանշանակ համաձայն եմ: Տեխնիկական հսկողության մասնակիցները հիմնականում չափից ավելի ցածր գներ են առաջարկում և ֆիզիկապես այդտեղ տեխնիկական հսկողությունը պատշաճ մակարդակով

իրականացնելը դժվար պատկերացնելի է: Սա համատարած խնդիր է եղել, որն առաջացել է «Գնումների մասին» օրենքից և որոշակի ներցիայից, որ հավելյալ չափորոշիչներ չեն մտցվել: Կխնդրեմ քաղաքապետի խորհրդական Անետա Բաբայանին ուսումնասիրել և մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություն տեխնիկական հսկողության գնումների ընթացակարգի նոր, ավելի խստացնող չափորոշիչներ սահմանելու վերաբերյալ:

Առաջին հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը:

Արտակ Հովակիմյան

-Տեղեկացնում եմ Ձեզ, որ տվյալ բնակիչներին բազմաթիվ անգամներ ցուցաբերվել է տարբեր տեսակի օգնություններ, երբ այդ ընտանիքում ապրում էր 100 և ավելի տարեկան տատիկը: Ինչ վերաբերում է դիմումին, ապա նախընտրական շտաբն այն տեղը չէ, որտեղ պետք է ընդունել դիմումներ: Դիմումներն ընդունվում են վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում: Նախընտրական շտաբում որևէ դիմում չի ընդունվել և չէր կարող ընդունվել:

Գրիգոր Իսկանդարյան

-Որպես արձագանք կրկին անգամ նշեմ, որ քաղաքացու պնդմամբ պարոն Հովակիմյան, Դուք եք նրան հրավիրել նախընտրական շտաբ և նա դիմումը գրել է այնտեղ: Միգուցե նրանք չեն տիրապետել, թե դիմումը որտեղ և ինչպես պետք էր գրել:

Պարոն Ավինյան, Դուք խոստացել էիք նրանց, որ այդ հարցով կզբաղվեք: Ես ցանկանում եմ հասկանալ զբաղվե՞լ եք Դուք, թե ոչ ու եթե զբաղվել եք, ապա ի՞նչ փուլում է:

Մյուս հարցի պատասխանի վերաբերյալ հնչեցնեմ արձագանք. սկսեմ նրանից, որ 2018թ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը համապետական մակարդակով մրցույթների մասին օրենսդրությունը փոխեց այնպես, որ ընդհանուր 130 տոկոս երաշխիքի ապահովման պարագայում բոլորը կարող են մասնակցել և շահել մրցույթներն առանց փորձի: Օրինակ՝ հացաբուլկեղեն արտադրող կազմակերպությունը, որոշ լիցենզիաներ ունենալու պարագայում, կարող էր զբաղվել շինարարությամբ, եթե ուներ ազատ միջոցներ: Իսկ նրանք, ովքեր չունեին ազատ միջոցներ, բավականաչափ գույք, բայց ունեին համապատասխան փորձ՝ նրանք չէին կարողանում մասնակցել մրցույթների: Ավագանու որոշման ընդունմամբ կարելի է այդ հարցը լուծել, որպեսզի գնիջեցումներն այդքան չլինեն:

Տիգրան Ավինյան

-Մենք կողմ ենք տեխնիկական հսկողության խստացմանը և եթե Ձեր առաջարկն այն է, որ այդ գործընթացում Դուք էլ ներգրավված լինեք, մենք միանշանակ պատրաստ ենք դրան: Քաղաքապետի խորհրդականներ Անետա Բաբայան, Սոնա Թևանյան և շինարարության և բարեկարգման վարչության պետի պաշտոնակատար Տիգրան

Գեղամյան, խնդրում եմ հաշվի առնել ավագանու անդամ Գրիգոր Իսկանդարյանի հնչեցրած կարծիքները և նրան տեղեկացնել գործընթացի մասին:

Հաջորդ հարցը՝ «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյան:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, ոչ թե հարց, այլ առաջարկ եմ ուզում ներկայացնել: Քաղաքային բյուջեում կա մի տող՝ չնախատեսված ծախսերի հետ կապված: Այդ ծախսերը տարվա ընթացքում շատ-շատ են լինում և բյուջեի այդ հատկացումը շատ քիչ է: Ես առաջարկում եմ վերանայել այդ կետը:

Տիգրան Ավինյան

-Տիկին Խաչատրյան, հրատապ լուծում պահանջող ծրագրերն իրականացվում են պլանավորման և նախորդիվ իրականացված աշխատանքների փորձից ու ծավալից ելնելով և, եթե լինում են բացառիկ դեպքեր, որ պետք է լինում այդ ծավալներն ավելացնել, քաղաքապետի որոշմամբ այդ ավելացումների հնարավորությունները կան, եթե կան բավարար հիմնավորումներ այդ ավելացումներն անելու համար: Իրականում հասկանալի է, որ վարչական շրջանների համար կարևոր գործիք է, որով կարողանում են արագ ռեժիմով շատ մեծ ծավալի հարցեր լուծել, բայց մենք պետք է ձգտենք գնալ դեպի ավելի պլանավորված աշխատանքներ: Մեր ամբողջ նպատակը կայանում է նրանում, որ մենք կարողանանք նախօրոք պլանավորել բոլոր այն աշխատանքները, որոնք պետք է կատարվեն և պլանավորածի համաձայն էլ իրականացվեն աշխատանքները և հրատապ լուծում պահանջող հարցերի ծրագիրը մնա միայն իրականում հրատապ լուծում պահանջող հարցերի համար: Մեր ընդհանուր ծրագիրը և ընդհանուր տրամաբանությունն ավելի համակարգային մոտեցման գնալու ճանապարհը գտնելն է, ավելի լավ պլանավորել, որ աշխատանքներն ավելի լավ կատարվեն: Վարչական շրջանները վերջին տարիների ընթացքում կարողացել են այդպես իրականացնել: Բակային աշխատանքների այն ծավալները, որ արվել են վերջին տարիների ընթացքում, անհամեմատելի են նախորդ տարիների հետ և այդ աշխատանքները հիմնականում արվել են պլանավորված նախագծերով, մրցույթներով:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Միքայել Խաչատրյան:

Միքայել Խաչատրյան

-Շնորհակալություն, առաջին հարցս հնչեցնեմ. տարբեր վարչական շրջանների՝ մասնավորապես Էրեբունի վարչական շրջանի բնակիչներից, ստանում ենք ահազանգեր աղբահանության հետ կապված խնդիրների վերաբերյալ: Խնդրում եմ պարզաբանել ի՞նչ խնդիրներ կան «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում և ի՞նչ քայլեր են ձեռնարկվում դրանք շտկելու համար:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը:

Սաշա Կատվալյան

-Որոշակի տեխնիկական խնդիրներ կային պահեստամասերի հետ կապված, բայց հիմնարկը հայտարարել է 200-ից ավել պահեստամասերի գնումներ և մոտ ժամանակներս ամբողջ խմբաքանակն արդեն կլինի Հայաստանում: Այդ պահեստամասերը գնում ենք արտերկրից: Խնդիրները հիմնականում տեղային են, օրինակ՝ հնարավոր է Էրեբունի վարչական շրջանի մեքենան ճանապարհին փչանա և այդ օրը որոշակի խնդիր առաջանա: Ընդհանուր առմամբ մենք փորձում ենք այնպես անել, որ ունենանք պահեստային մեքենաներ, որ տվյալ խնդիրները կարողանանք արագ լուծել և պատշաճ աղբահանություն իրականացնել:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

-Պարոն Ավինյան, ս.թ. մարտի 28-ին հարցում եմ կատարել՝ տեղեկատվություն ստանալու համար և դեռ պատասխան չեմ ստացել: Հավանաբար, աշխատակազմի կողմից պատասխանը կտրամադրվի 21 օրը լրանալու դեպքում:

Հարցս վերաբերում է Գարեգին Նժդեհի փողոցի հ.56 ա հասցեում գտնվող նախկին «Կանվոլնի» գործարանի հանրակացարանի շենքին: Ցանկանում եմ իմանալ շենքի կարգավիճակի մասին:

2017 թվականի փետրվար ամսին շենքին տրվել է 4-րդ կարգի վթարայնության աստիճան: Նույն տարվա հունիս ամսին շենքին տրվել է 3-րդ կարգի վթարայնության աստիճան: Ցանկանում եմ իմանալ 3-րդ կարգի վթարայնության աստիճանի կարգավիճակն ինչքա՞ն ժամանակով է տրվել և ժամկետը լրանալուց հետո ի՞նչ աշխատանքներ են ձեռնարկվել՝ բնակիչների բնակության հարցը լուծելու համար: Շենքն ութ հարկանի է և շենքում կա 200 տնտեսություն և մոտավորապես 600 բնակիչ է ապրում: Շենքը գտնվում է աղետալի վիճակում և ցնցվում է, շենքի ներսում զգացվում է փողոցում երթևեկող մեքենաների ընթացքը: Շենքում վատ սանիտարական վիճակ է, 15 քմ տարածքում բնակվում են 6-7 մարդ:

Դուք 2022 թվականի հոկտեմբեր ամսին այցելել եք այդ շենք և խոստացել եք լուծել հարցը՝ բնակիչներին ապահովել բնակարաններով: Շուրջ 100 բնակարանի բնակիչների կողմից ներկայացվել է ստորագրահավաք՝ նրանք խնդրում եմ լուծել իրենց բնակարանային խնդիրը:

Խնդրում եմ ներկայացնել տեղեկատվություն, արդյոք մոտակա ժամանակահատվածում պատրաստվում եք լուծել բնակիչների բնակարանային հարցը:

Երկրորդ հարցը վերաբերում է Կոմիտասի պողոտայի հ.53 հասցեում գործող շուկային: Շուկայի շուրջ 150 և ավել աշխատակիցներ ստորագրահավաք են ներկայացրել և դիմել են մեզ: Այս տարվա ձմռանը շուկայի աշխատակիցներին ասել են, որ պետք է մինչև ս.թ. ապրիլի 15-ը դադարեցնեն իրենց գործունեությունը շուկայի տարածքում և տեղափոխվեն: Ներկայացված ժամկետը երկարաձգվել է մինչև մայիսի 30-ը: Սակայն, ըստ պայմանագրերի, ժամկետը լրանում է ս.թ. հունիսի 30-ին: Շուկայի աշխատակիցները խնդրում են իրենց տալ ողջամիտ ժամանակ՝ առնվազն մինչև պայմանագրերի ժամկետի լրանալը կամ 1-2 ամիս ավել, որպեսզի հնարավոր լինի ապրանքն իրացնել և հետո տեղափոխվել:

Այս հարցի վերաբերյալ կատարված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել էր շուկայի աշխատակիցների գործունեությունը շարունակելու համար այլ հասցեներ: Ներկայացված հասցեներում այդ մարդկանց ոչ բոլորին է հարմար շարունակել իրենց գործունեությունը, որովհետև Կոմիտասի պողոտայի հ.53 հասցեում գտնվող շուկան փակ տարածք է, իսկ առաջարկված տարածքները բացօթյա են:

Արդյոք հնարավոր չէ այդ մարդկանց ընդառաջել մինչև պայմանագրային ժամկետների լրանալը կամ մի փոքր ավել:

Տիգրան Ավինյան

- Շնորհակալություն պարոն Դանիելյան: Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը հանդիպել է Կոմիտասի պողոտայի հ.53 հասցեում գտնվող շուկայում առևտուր իրականացնող քաղաքացիների հետ և պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ քաղաքացիների և շուկայի սեփականատերերի հետ կազմակերպել ևս մեկ հանդիպում:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Գեղամ Կարապետյանը:

Գեղամ Կարապետյան

-Երկու օրից պլանավորվում է կազմակերպել ևս մեկ հանդիպում շուկայի տնտեսվարող սուբյեկտների և շուկայի ղեկավարության հետ: Փաստ է, որ ժամկետները երկարաձգվել են մինչև ս.թ. մայիսի 30-ը, իսկ ժամկետն ավելի երկարաձգելու համար կարծում եմ լրացուցիչ բանակցությունների կարիք կա:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կարապետյան, կարծում եմ ժամկետներն անընդհատ երկարաձգելով խնդիրը չի լուծվի, անհրաժեշտ է ներկայացնել հնարավոր իրատեսական տարբերակներով լուծումներ:

Գեղամ Կարապետյան

-Պարոն Ավինյան, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի կողմից դիտարկվում են տարածքներ:

Տիգրան Ավինյան

-Այսօր ապրիլի 16-ն է և մինչև մայիսի 30-ը շատ ժամանակ կա: Քաղաքացիներին առևտուր իրականացնելու համար ներկայացրեք այդ տարածքների հասցեները՝ կոնկրետ ժամկետներով՝ չխախտելով սեփականատիրոջ շահերը:

Գեղամ Կարապետյան

-Պարոն Ավինյան, ընթացքի մասին Ձեզ կզեկուցենք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, ինչ վերաբերում է 4-րդ կարգի վթարային շենքերին, ցանկանում եմ տեղեկացնել, որ բարեհաջող իրականացրել ենք Արցախի փողոցի նրբանցքի վթարային շենքերի բնակիչներին բնակարաններով ապահովելու հարցը: Փաստացի, արդեն 57 ընտանիք ստացել է կամ բնակարանի գնման վկայական, կամ նոր բնակարան: Այդ հասցեներում պլանավորում ենք իրականացնել քանդման աշխատանքներ:

Արզումանյան փողոցի հ.10 և հ.17 վթարային շենքերի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն քաղաքապետ, արդեն տեղի է ունեցել պայմանագրերի ծանուցման գործընթացը, բնակիչների պնդմամբ և մեր քննարկմամբ նաև պայմանագրերում ձևակերպում է ավելացվել, որպեսզի հետագայում բնակարանների տրման պարտավորությունն ամրագրվի, և բնակիչների շենքից դուրս գալու պայմաններում ավելի հստակ լինի պայմանագրերի կնքումը: Տեղեկատվությունը կարող ենք աշխատանքային կարգով տրամադրել ավագանու անդամին:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, այս մասնավոր դեպքերը բարձրաձայնում եմ, որպեսզի նախ հասկանանք, որ գործընթացը տեղի է ունենում և երկրորդը՝ այդ գործընթացում խնդիրների հաղթահարման ճանարարհով ենք գնում: Քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանն զբաղվում է համակարգային լուծման տարբերակով և՛ 3-րդ, և՛ 4-րդ կարգի վթարային շենքերի համար, որտեղ հնարավոր է թաղամասային տրամաբանությամբ կառուցապատողների համար լուծումներ և ավելի բարենպաստ պայմաններով իրավական բազա ստեղծելու ծրագիր:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Այդ հարցերը քննարկում եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ և բավականին մոտ ենք լուծումներ գտնելու և առաջարկելու ճանապարհին: Կլինի կոնցեպտուալ լուծումներ ռենովացիոն ծրագիր ունենալու համար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, մասնավորապես դա ենթադրելու է իրավական այնպիսի լուծումներ, ինչպիսին են օրինակ՝ կառուցապատողներին տալ որոշակի արտոնություններ,

ինչպես եկամտային հարկի տրամաբանությունն էր ասում, եթե այդ կառուցապատումներն իրականացվում էին վթարային շենքերի փոխարեն, ապա կառուցապատողը նաև որոշակի սոցիալական բեռ է իր վրա վերցնում՝ տվյալ շենքի բնակիչների խնդիրները լուծելու տեսանկյունից: Պետք է այնպես անել, որ հնարավոր լինի որոշակի գործիքների կիրառմամբ, կառուցապատողների վրա այդ սոցիալական բեռը դնելով, որոշ այլ տեղերում նրանց տալ արտոնություններ: Այդպես կշահագրգռենք նմանատիպ ծրագրերին մասնակցությունը: Հետագայում նման ծրագրերը, կարծում եմ, իրականացվելու են որոշակի լոտերի տրամաբանությամբ: Այսինքն՝ քաղաքապետարանի կողմից կլինեն կառուցապատման տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ 3-րդ և 4-րդ կարգի վթարային շենքերի կամ դրանց հարակից թաղամասերի վերակառուցման և կտրվեն արտոնությունների փաթեթներ և կդրվի նաև բնակիչների միջնաժամկետ և երկարաժամկետ բնակարանների լուծման հարցը: Օրինակ՝ Արզումանյան փողոցի հ.10 և հ.17 վթարային շենքերի դեպքում, պայմանն այն է, որ կառուցապատողը երկու տարի շարունակ ֆինանսավորում է բնակիչների վարձակալած բնակարանների վճարները: Դրանից հետո վթարային շենքի փոխարեն կառուցվող նոր շենքում կտրամադրվեն բնակարաններ: Ուսումնասիրվում է նաև տարբեր երկրներում իրականացվող փորձերը և ստեղծում ենք այդ «ռենովացիայի» օրենքի հիմնարար բազան: Կարծում եմ այդ օրենքի շրջանակներում հետագայում կկարողանանք անդրադառնալ բնակիչների բնակարանային խնդիրների լուծմանը: Մասնավոր այս դեպքերով ունենք գրանցած հաջողություններ և սա հիմք է հանդիսանալու այդ օրենքի համար:

Պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը, խնդրեմ:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն քաղաքապետ, որպեսզի տեղեկատվությունն ամբողջական ճշգրիտ լինի, նշեմ, որ Արզումանյան փողոցի նշված շենքերի կառուցումը նախատեսվում է երկու տարվա ընթացքում, բայց վարձակալության գումարների տրամադրման պարտավորությունը ստանձնում է մինչև բնակարանների հանձնումը: Այսինքն՝ եթե ինչ-որ պատճառներով երկարաձգվեն աշխատանքները, որը չնայած չի նախատեսվում, այդ պարտավորությունը ստանձնել է, որպեսզի այդ երկու տարին լրացուցիչ անհանգստություն չհարուցի բնակիչների համար:

Արմենակ Դանիելյան

-Պարոն Ավինյան, փոխանցում եմ Կոմիտասի պողոտայի հ.53 հասցեում գտնվող շուկայի աշխատակիցների խնդրանքը. ս.թ. հունիսի 30-ին լրանում է պայմանագրերի ժամկետները և խնդրում են մինչև հունիսի 30-ը պահպանվեն այդ ժամկետները, հակառակ դեպքում կլինի պայմանագրային պարտավորությունների խախտում:

Ինչ վերաբերում է Գարեգին Նժդեհի փողոցի հ.56ա շենքին՝ նշեմ, որ 2022 թվականի հոկտեմբեր ամսին այցելել եք այդ շենք և ասել եք, որ Արցախի նրբանցքի

հանրակացարանային շենքի հարցի լուծման ավարտից հետո կլուծվի այս շենքի հարցը: Այս շենքի բնակիչները չեն ուզում իրենց հարցն անտեսվի, դարձյալ իրականացվի շենքի ամրացման աշխատանքներ և տրվի 3-րդ կարգի վթարայնության աստիճան:

Որքա՞ն ժամկետում այդ շենքի հարցը կլուծվի:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, Երևան քաղաքում կան մոտ 13՝ 4-րդ կարգի վթարայնության և մոտ 120՝ 3-րդ կարգի վթարայնության շենքեր:

Ինձ համար կարևոր են և՛ Արցախի նրբանցքի, և՛ Արզումանյան փողոցի հ.10 և հ.17, և՛ նույնքան կարևոր են Գարեգին Նժդեհի փողոցի հ.56ա շենքերի բնակիչները, ովքեր ունեն այդ բնակարաններում ապրելու անվտանգության խնդիրներ: Իրականում Երևանի քաղաքապետարանն այս իրավասությունները չուներ, դա եղել է մեր նախաձեռնությունը 2022թ. սեպտեմբեր ամսից սկսած և այդ նախաձեռնությունը ցանկանում ենք ավելի ինստիտուցիոնալ հենքի վրա դնել: 4-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերի հարցը քննարկվում է քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից և այդ հարցերի լուծման ավարտից հետո կքննարկենք 3-րդ կարգի վթարայնության շենքերի խնդիրների լուծման հարցերը:

Պարոն Դանիելյան, առավել մանրամասն պազաբանման համար կարող եք աշխատանքային կարգով դիմել քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանին և նա ամբողջական, այս գործընթացի վերաբերյալ, տեղեկատվություն կտրամադրի: Մենք գիտենք բազմաթիվ նման շենքեր կան և ինստիտուցիոնալ լուծումներ ենք տալիս: Գարեգին Նժդեհի փողոցի հ.56 ա շենքի բնակիչները հնարավորություն են ունեցել Ձեզ դիմել և Դուք բարձրաձայնում եք նրանց հարցը, սակայն չի նշանակում, որ Ֆուչիկի կամ Մարգարյան փողոցների վթարային շենքերի բնակիչների հարցն ավելի նվազ ռիսկային կամ վտանգավոր չի դառնում: Մենք ցանկանում ենք լուծել բոլորի հարցերը և առաջնահերթությունները տրվում են առավել ռիսկային շենքերին: Փորձը ցույց է տվել, որ այս հարցերն առավել ժամանակատար են և բնակիչները չեն համաձայնվում վտանագավոր շենքերից դուրս գալ և հավելյալ երաշխիքներ են հարկավոր լինում: Մեր գործողություններն ինստիտուցիոնալ լուծումների շրջանակներում են:

Պարոն Փամբուխչյանի կողմից իրականացվող գործընթացի վերաբերյալ, խնդրում եմ, տեղեկատվությունը ստացեք և պարոն Դանիելյանի կողմից ներկայացված գրավոր հարցմանը շուտ պատասխանեք, տիկին Վարդանյան, որպեսզի տեղեկացված լինի և կարողանա բնակիչների հետ կոմունիկացվի:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Կիմա Աբրահամյան, խնդրեմ:

Կիմա Աբրահամյան

-Հարցս վերաբերում է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի՝ փողոցները մաքրող աշխատակիցների զգեստափոխման վայրին: Նրանք զգեստափոխվում և հագուստը թողնում են տարբեր տեղերում, կան մարդիկ, որ կամուրջի տակ են զգեստափոխվում, բայց կան նաև վարչական շրջաններ, որտեղ տարածք է հատկացված: Ես շատ կուզենայի խումբ ստեղծեինք, քննարկեինք ու բոլոր վարչական շրջաններում հատկացվեին 40-50քմ մակերեսով վերանորոգված, լոգարանով և պահարաններով ապահովված տարածքներ՝ զգեստափոխվելու և հագուստը թողնելու համար:

Տիգրան Ավինյան

-Ես առաջարկում եմ քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանին, խնդիր դնել վարչական շրջանների ղեկավարների առջև, որ պետք է հավաքարարների համար պատշաճ պայմաններ ապահովվեն և սահմանել իրատեսական ժամկետ՝ հաշվի առնելով մրցութային ընթացակարգի և շինարարական աշխատանքների ժամկետները, նաև ներկայացնել հավաքարարների արտահագուստի վերաբերյալ առաջարկ:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Արամ Թորոսյան:

Արամ Թորոսյան

-Հեռախոսազանգեր և դիմումներ ենք ստանում կառուցապատողներից՝ ավարտական ակտերի ընդունման հետ կապված: Լինում են դեպքեր, երբ շինարարական աշխատանքներն ավարտվում են, քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակիցները տեղում հաստատում են, սակայն գործը հասնում է քաղաքապետարան ու երկար ժամանակ ավարտական ակտ չի տրամադրվում՝ թե՛ բնակելի փոքր տներին, թե՛ բազմաբնակարան շենքերին: Խնդրում եմ ներկայացնել, թե ինչու՞մն է խնդիրը և ի՞նչ լուծում կա այդ հարցին:

Տիգրան Ավինյան

-Ավարտական ակտերի կուտակումները կապված են քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության վերաձևավորման և կադրային մեծ փոփոխությունների հետ: Կուտակումները ժամանակավոր են:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի պաշտոնակատար Ռուբեն Խոջայանը:

Ռուբեն Խոջայան

-Բոլոր այն կառուցապատողների հետ, ում գործերը ուշացել են, մենք կապի մեջ ենք, առաջացած տեխնիկական խնդիրներն արդեն կարգավորված են և մոտ 10 օրվա ընթացքում բոլոր կուտակված գործերն ամբողջությամբ կտրամադրվեն կառուցապատողներին:

Տիգրան Ավինյան

-Քաղաքապետի խորհրդական Սոնա Թևանյանը կներկայացնի իր համաձայնեցմանը ներկայացված կուտակված ավարտական ակտերի մասին տեղեկատվություն:

Սոնա Թևանյան

-Կուտակված ավարտական ակտերը մինչև շաբաթվա վերջ կտրամադրվեն:

Արամ Թորոսյան

-Հաջորդ հարցս վերաբերում է «Հրազդան» մարզադաշտի հարակից տարածքում գործող՝ «Վարդանյան եղբայրներ» կրկեսին: Նրանք համաշխարհային ճանաչում ունեցող մարդիկ են, ովքեր ժամանակավոր հանգրվանել են այդ մասնավոր տարածքում և տարածքի սեփականատերն այն պահում է շատ վատ վիճակում: Խնդրում եմ պարտադրել մաքրելու տարածքը կամ համատեղ ուժերով մաքրենք այդ աղբը: Առաջարկում եմ նաև դիտարկենք նրանց՝ այլ տարածք տրամադրելու հարցը:

Տիգրան Ավինյան

-Քաղաքապետի օգնական Արման Լազրյանին խնդրում եմ հանդիպել «Վարդանյան եղբայրներ» կրկեսի կազմակերպիչների հետ, գույքագրել խնդիրները և երկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություն՝ դրանց լուծումների վերաբերյալ:

Պարոն Թորոսյան, կարող ենք կազմակերպել շաբաթօրյակ, որի շրջանակներում նաև մաքրման աշխատանքներ կիրականացնենք Ձեր նշած տարածքում: Շաբաթօրյակի կազմակերպման հարցերով կզբաղվի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մանուկ Սուքիասյան:

Մանուկ Սուքիասյան

-Առաջին հարցս վերաբերում է «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր հաստիքի համար մրցույթ հայտարարելու մասին իմ հարցմանը: Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ներկայացված պարզաբանման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.03.2020թ. հրամանում առկա է անհամապատասխանություն, ինչ արդյունքում քաղաքապետարանը ձեռնպահ է մնում մրցույթներ հայտարարելուց:

25.12.2023թ. նույն նախարարի հրամանով շտկվել է վերը նշված անհամապատասխանությունը: Այսինքն՝ 3,5 տարի է պետք եղել նախարարի հրամանի անհամապատասխանությունը շտկելու համար: Մինչև 2021թ. «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ը գործել է այն վճարումների հաշվին, որ հանգուցյալների հարազատները կատարել են: 2022-2023թթ. Երևանի քաղաքապետարանն սկսել է ֆինանսավորել այդ կազմակերպությանը, 2022թ.՝ գրեթե 104 մլն դրամ, 2023թ.՝ 267 մլն և 5.8 մլն դրամ: Ընդամենը հաստիքացուցակն է ավելացել՝ հսկիչները դարձել են 10 հոգի: Բացի այն, որ ամեն գերեզմանատուն ունի իր հսկիչը, կենտրոնական ապարատում ևս 8 հսկիչ է ավելացել, նաև աշխատավարձերի շեշտակի բարձրացում է եղել ու այդ ամենը

քաղաքի բյուջեի հաշվին: Եթե 2023թ. դեկտեմբերի 25-ին անհամապատասխանությունը շտկվել է, ինչու՞ մրցույթ չի անցկացվում: Ենթադրում եմ՝ որպեսզի կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի աշխատանքային ստաժը համապատասխանի պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքային ստաժին:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Նազարյանը:

Հրաչյա Նազարյան

-Տեղեկացնեմ, որ կենտրոնական ապարատում հսկիչների հաստիքներ չեն ավելացել: Հսկիչների հաստիքներ ավելացել են գերեզմանատներում, քանի որ գերեզմանատների տարածքը 500հա-ից ավել է:

Ինչ վերաբերում է քաղաքապետարանի կողմից հատկացված գումարին՝ դրա վերաբերյալ գրավոր պատասխանվել է պարոն Սուքիասյանին: 2022թ. սուբսիդիան տրամադրվել է պարգևավճարների համար, 2023-2024թթ. այդ սուբսիդիան չի տրամադրվել, քանի որ մեր ավելացված ծառայությունների հաշվին ստացած գումարներով կազմակերպությունը տրամադրել է պարգևավճարներ:

Մանուկ Սուքիասյան

-Որպես արձագանք նշեմ, որ հաստիքացուցակի ավելացումից հետո վերջերս նշվեց, որ նաև ապօրինի հողազավթումներ կան և գերեզմանաքարեր են գողանում: Այսինքն՝ այն հսկիչները, որ ավելացան, իրենց ֆունկցիան չկատարեցին և ավելի նպատակահարմար էր տեսախցիկներով վերահսկել, ոչ թե հաստիքների ավելացմամբ:

Երկրորդ հարցս վերաբերվում է Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտին: Նախորդ նիստին այս հարցը բարձրացվել էր և նշել եք, որ այդ խնդրին տեղյակ եք: Դրանից հետո մենք հրավիրեցինք հանրային քննարկում և՛ իշխող խմբակցությանը, և՛ քաղաքապետի տեղակալին հրավիրել էինք, բայց արձագանք չեղավ:

Մի քանի փաստ եմ ուզում արձանագրել, որ պետական բյուջեից շուրջ 1 մլրդ դրամի հատկացումներով սարքավորումներ են գնվել ինստիտուտի համար, որոնք եզակի են տարածաշրջանում, 900 մլն դրամի դրամաշնորհ է այժմ հարվածի տակ: Թաղապետը տարածքը վերցրել է իր տնօրինության տակ, հետո սեփականաշնորհել: Եղել է քրեական գործ, մարդիկ խոստովանել են, հանցակազմը չի հերքվել և վաղեմության ժամկետով կարճվել է, բայց այս պահին խախտված է Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի գործունեությունը: Հեռանկար կա ինստիտուտը Ակադեմիական քաղաք տեղափոխվելու, բայց Ակադեմիական քաղաքը դեռևս չկա, իսկ օրգանական քիմիայի ինստիտուտի տեղում բարձրահարկ շենքի կառուցման շինթույլտվություն է տրված: Այս պահին մարդիկ կանգնած են լրջագույն խնդրի առաջ: Շինարարությունը խնդիր է իրենց համար, սակայն եթե շենքը կառուցվի՝ հետագայում իրենք են լինելու խնդիր այդ շենքի բնակիչների համար, քանի որ այդտեղ արտանետումներ կան: Օրգանական քիմիայի ինստիտուտի աշխատակիցները

ինստիտուտի հետագա ճակատագրի հետ կապված դատական գործընթաց են սկսել: Ակնհայտ է, որ բազմաթիվ, ճյուղավորված և իրավական առումով շատ խոցելի տարածք է և դրա հետ կապված ինստիտուտի աշխատակիցներն ակնկալում են պարզաբանում և մինչև իրենց շենքի ճակատագիրը որոշելը տեղում շինարարական աշխատանքներ չիրականացվեն:

Տիգրան Ավինյան

-Իմ ունեցած տեղեկատվության համաձայն՝ դատարանի որոշմամբ շինարարական աշխատանքները կասեցված է: Բազմաթիվ քննարկումներ են եղել այս թեմայի վերաբերյալ, որոնց մասին տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Մենք լսել ենք Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի աշխատակիցներին, քննարկումներ ենք ունեցել, երբ արդեն որոշակի փուլ անցել էր, այսինքն՝ տվյալ պահին մեր կողմից կասեցնելու կամ որևէ այլ գործողություն անելու իրավական հիմք չկար, բայց պարզվում է, որ նրանք դատական կարգով են փորձում հարցը լուծել: Քաղաքապետարանի միջամտությունն այդ պահին չկար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Սուքիասյան, դատարանի որոշումներից է կախված հետագա ընթացքը և հարցի լուծումը: Երևանի քաղաքապետարանի տեսնակյունից, իրավական առումով, որևէ հարց չկա, բոլոր հարցերը մեր լիազորություններից դուրս են:

Մանուկ Սուքիասյան

-Արձագանքեմ. ըստ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի փաստաբանի՝ դատախազությունը վերջին բոլոր քաղաքապետերին ծանուցել է, որ գնան դրա հետքով և փորձեն հասկանալ, թե համայնքի ենթակա գույքը ի՞նչ սկզբունքներով և ի՞նչ կերպ է սեփականաշնորհվել: Ես կառաջարկեմ փորձեք այդ թղթաբանությունը հայթայթել:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Քաղաքապետարանի կողմից արդեն իսկ ներկայացվել է գումարի բռնագանձման հայցադիմում՝ որպես հանցագործությամբ պատճառված վնաս, որն արդեն շուրջ 1 տարի է քննվում է: Այժմ ավարտական փուլին է հասցվել և մոտ ժամանակները կունենանք դատական ակտ՝ այն ժամանակ թաղային համայնքի, այժմ, որպես իրավահաջորդ, Երևանի քաղաքապետարանին պատճառված վնասը հատուցելու համար:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Պարոն Ավինյան, Երևան քաղաքի փողոցները վաղուց վերածվել են բլուրների և յուրաքանչյուր փոսալցումից կամ մասնակի ասֆալտապատումից հետո հօդս են ցնդում բոլոր սպասելիքները, որ վերջապես կունենանք որակյալ ասֆալտապատ փողոցներ: Խորդուբորդությունները միևնույն է չեն շտկվում, վարորդների համար միայն խնդիրներ են առաջացնում՝ վթարներ և խցանումներ: Ե՞րբ ենք ունենալու բարեկարգված, պատշաճ ասֆալտապատ, երևանցուն արժանի փողոցներ, որոնք տրանսպորտի համար կապահովեն անխոչընդոտ և սահուն ընթացք:

Երկրորդ հարցը հնչեցնեմ. զանգվածային ծառահատումների արդյունքում, կիսաչորացած, անկենսունակ ծառերի հետ մեկտեղ, հատվեցին նաև կենսունակ, առողջ ծառեր:

Ինչպե՞ս հասկանալ, քաղաքում կան հատման ենթակա ծառեր, որոնք լուրջ և անդառնալի հետևանքներ կարող են ունենալ քաղաքացիների համար, բայց այդ ծառերը մինչև այժմ կանգուն են: Օրինակ՝ Աբովյան փողոցի h.22 հասցեում գտնվող ծառը, որի մասին շաբաթներ առաջ տեղեկացրել եմ համապատասխան վարչություն, բայց ծառը մինչև այսօր կանգուն է: Այս ուղղությամբ ոչ մի աշխատանք չի տարվել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Ձեր կողմից նշվեց, որ կան փողոցներ, որտեղ առկա են խորդուբորդություններ: Այո՛, նման խնդիրներ առկա են, այդ փողոցները գերծանրաբեռնված են բեռնատար մեքենաների երթևեկությամբ: Ներկայումս ակտիվ աշխատում ենք այդ խնդիրները վերացնելու և այդ ճանապարհահատվածները վերանորոգելու ուղղությամբ:

Ցանկանում եմ նշել, որ այս տարի միայն առաջնային փողոցներում իրականացնելու ենք 104.000 քմ փոսային նորոգման աշխատանքներ: Վարչական շրջանների կողմից հայտարարված մրցույթներով այդ ծավալից ավել ներառվելու են նաև ոչ միայն բակային տարածքներ, այլև վարչական շրջանների երկրորդական փողոցներ: Այս տարի ունենք հայտարարված նաև մոտ 50 կմ միջին նորոգման և ճաքալցման աշխատանքներ: Կարծում եմ, որ տարեվերջին երթևեկելի փողոցների իրավիճակը էականորեն բարելավված կլինի:

Մեկ անգամ ևս ցանկանում եմ շեշտել, որ վերջին տարիներին Երևան քաղաքի ճանապարհների մասով թե՛ ծանրաբեռնվածությունը, թե՛ ազդեցությունը քաղաքային միջավայրում էականորեն շատացել է և հիմնական պատճառը դա է:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին կպատասխանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Արմեն Բեգոյան

-Ավագանու հարգելի՛ անդամ, Ձեր ձևակերպման վերաբերյալ, որ առողջ ծառեր են հատվել՝ կենսունակությունը կորցրած ծառերի հետ մեկտեղ, համամիտ չեմ:

Բազմիցս նշել եմ, որ թեղի ծառատեսակները Երևանում տնկվել են նախորդ դարի 40-50-ական թվականներին և դրանց 99%-ն ունեն միևնույն տարիքը:

Առաջին հայացքից սնամեջ չլինելու պատճառով, քաղաքացիներին կամ Ձեզ կարող է թվալ, որ այդ ծառերն առողջ են, բայց ծառերի կենսունակությունը միայն դրանց փուչ, դատարկ բներով չէ պայմանավորված:

Ինչ վերաբերում է Աբովյան փողոցի հ.22 հասցեին, նշեմ, որ դիմումն ուսումնասիրվել է և կազմվել է ծառահատման տոմս: Ցանկանում եմ տեղեկացնել, որ այդ ծառահատման տոմսերը բավականին բարդ ուսումնասիրություններ են անցնում: Մի քանի մասնագետների ուսումնասիրությունից հետո միայն դրանք հաստատվում են: Աբովյան փողոցի հ.22 հասցեի վերաբերյալ կարող եմ ասել, որ հատման տոմսը հաստատվել է: Պայմանավորված գարնանային՝ հիմնականում տունկի աշխատանքների հետ, նման չոր ծառերի հեռացումը թողնում ենք ավելի հանգիստ ժամանակահատվածում, եթե դրանք իրենցից տապալման վտանգ չեն ներկայացնում:

Չոր ծառերի հատման վերաբերյալ, հավելեմ, որ անցած տարի մոտ 1000 չոր ծառ է հատվել և հեռացվել քաղաքի կանաչ տնկարկներից: Դրանք շատ-շատ են և էլի կան ու մեր ունեցած ռեսուրսների և ուժերի հնարավորության սահմանում պարբերաբար հեռացվում են քաղաքից: Դա անվերջանալի գործընթաց է:

Արշակ Սարգսյան

-Որպես արձագանք նշեմ, պարոն Բեգոյան, իմ կողմից նշված՝ Աբովյան փողոցի հ.22 հասցեում գտնվող ծառը, կարծում եմ, որ խնդրահարույց է՝ կարող է ընկնել մեքենայի կամ մարդու վրա: Աբովյան փողոցում ամիսներ առաջ նման դեպք եղել էր՝ ծառն ընկել էր մեքենայի վրա: Այս ծառը ևս կարող է ընկնել: Աբովյան փողոցում այդ ծառին հարակից մեկ ծառ եմ տեսել, խնդրում եմ ուշադիր լինել այդ ծառի նկատմամբ, եթե անհրաժեշտ է կտրեք, եթե ոչ, ապա տեղեկացրեք, որ այդ ծառը կենսունակ է:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Ես ևս երկու հարց ունեմ, առաջին հարցս վերաբերում է սոցիալական անվտանգային խնդրին՝ կապված Գայի պողոտայի հետ: Այնտեղ Քոչարյան փողոցի խաչմերուկում մեկ ամիս առաջ հետիոտնային անցումի փոփոխություն է կատարվել և դրա հետևանքով առաջացել է լուրջ վթարային իրավիճակ: Տևական ժամանակ է բնակիչները բողոքում են և պնդում, որ այս մեկ ամսվա ընթացքում ավելի շատ վթարներ են եղել, քան նախկին մի քանի տարիների ընթացքում: Ես այս պահին ունեմ 112 բնակչի ստորագրություն, ովքեր պահանջում են, որպեսզի վերականգնվի նախկին հետիոտնային անցումը: Այդ

փոփոխության նպատակն էական չէ, որովհետև պարզ երևում է, որ ոչ կոմպետենտ վերաբերմունք է դրսևորվել այս հարցը լուծելու համար: Բնակիչները նաև պնդում են, որ այդ հատվածի կանգառասրահի տեղն անհարմար է և պետք է տեղափոխվի ներքև:

Հարցս հետևյալն է, որքա՞ն ժամանակ կտևի այս փոփոխությունը և կանգառասրահի տեղափոխման ու բարեկարգման հարցը:

Երկրորդ հարցս վերաբերում է մշակութային ժառանգության պահպանման խնդրի, մասնավորապես՝ Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող պատմամշակութային հուշարձան-շենքին, որը կառուցվել է 19-րդ դարում և այդտեղ վերջին 40 տարվա ընթացքում գործում է 3 հասարակական կազմակերպություն՝ «ԻԿՕՄՕՍ/ՀԱՅԱՍՏԱՆ» (Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտե), «Բնօրրան հուշարձանների պահպանության հայկական ընկերություն», «Վան-Վասպուրական հայրենակցական միություն» հասարակական կազմակերպությունները: Վերջիններս զբաղվում են ազգային, մշակութային ժառանգության ուսումնասիրման, հանրահռչակման, պահպանման խնդիրներով: Ներկայումս կազմակերպությունները շատ կարևոր դեր ունեն և գտնվում են այն ճիշտ վայրում, որտեղ պետք է գտնվեն նման կառույցները: Սա պատմամշակութային հուշարձան-շենք է և չպետք է օտարման ենթակա լինի: Ցանկանում եմ իմանալ ի՞նչ նպատակ է հետապնդում այս կազմակերպություններին նշված տարածքից հանելը, ի՞նչ նպատակ է հետապնդում այդ կազմակերպություններին զրկելն իրենց անհատույց օգտագործման իրավունքից կամ ինչու՞ կազմակեպություններին այլ տարածք չի հատկացվում: Այս կառույցը հանդիսանում է պատմամշակութային հուշարձան-շենք, այդ պատճառով ցանկանում եմ իմանալ ի՞նչ գործունեություն է ծավալվելու այդտեղ:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Մելիքյան, այդ ամենը հետապնդում է միայն մեկ նպատակ: Քանի որ այդ շենքը պատմական և մշակութային կարևորություն ունի և արժեքավոր է, շենքում նախատեսվում է ստեղծել թանգարան: Այն հասանելի է լինելու հանրության համար և որևէ կերպ չի մասնավորեցվելու: Նշեմ, որ թանգարանի կազմակերպման ծրագիրն իրականացվելու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ:

Ինչ վերաբերում է այդ շենքում տեղակայված կազմակերպություններին՝ պատրաստ ենք դիտարկել իրենց դիմումները և որոշակի լուծումներ փորձենք գտնենք նրանց համար:

Առաջին հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, խնդրեմ:

Վազգեն Հարությունյան

-Տիկին Մելիքյան, տեղեկացնեմ, որ Ձեր նշված հատվածում իրականացվել է երթևեկության կազմակերպման փոփոխություն և հետիոտնային անցումը տեղափոխվել է ավելի անվտանգ վայր: Այս փոփոխությունը համաձանեցված է եղել նաև ՀՀ ՆԳՆ

ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ: Ձեր կողմից բարձրաձայնված խնդիրը պայմանավորված է եղել նրանով, որ հետիոտնային անցումը տեղափոխելուց հետո, նախկին հետիոտնային անցման գծանշումները սևացվել են, որպեսզի բնակիչներն այդ հատվածով չանցնեն փողոցը:Ժամանակի ընթացքում՝ տվյալ ներկանյութի մաքրվելու արդյունքում, ենթադրում եմ հետիոտնային անցման դեղին գծանշումը երևացել է և քաղաքացիները շարունակել են հին հետիոտնային անցումով անցնել, արդյունքում առաջացել է անվտանգության խնդիր: Մենք այսօր էլ կձեռնարկենք միջոցներ այդ հին գծանշումները մաքրելու ուղղությամբ, որպեսզի այլևս այդ մասով խնդիր չլինի:

Սուսաննա Մելիքյան

-Արձագանքեմ՝ նախ ցանկանում եմ նշել, որ այդ փողոցում կա նաև շրջադարձի հատված և տարբեր կողմերից մեքենաների առկայությունը, շատ հաճախ ծանրաբեռնվածություն է առաջացնում: Մյուս կողմից՝ ես չեմ կարծում, որ 112 բնակիչ, ովքեր երկար տարիներ ապրում են այդ տարածքում, իրենք ավելի պակաս են հասկանում, որ հատվածով է հեշտ անցնելը, որ հատվածով՝ վտանգավոր, գուցե այդ փոփոխության նպատակը շատ կարևոր է, բայց պետք է նաև բնակիչների հետ քննարկել այդ հարցը:

Նշեմ, որ այդ գծանշումների տեղի փոփոխության արդյուքում առաջացել է ակնհայտ վթարային իրավիճակ: Նույնիսկ, եթե Դուք հին գծանշումները մաքրեք, նորը թողնեք, այդ հատվածով անցնելը միևնույն է շատ բարդ է, նախկին տեղը շատ ավելի հարմար ու ճիշտ էր:

Ինչ վերաբերում է Հանրապետության փողոցի հ.32 հասցեում հուշարձան-շենքը թանգարան դարձնելու հետ կապված հարցին, նշեմ, որ այդ կազմակերպությունները նույնպես պատրաստ էին համագործակցել և մտադիր էին այդտեղ թանգարանային ցուցադրություն ստեղծել: Այստեղ ուղղակի կարևոր է իմանալ ի՞նչ բնույթի թանգարան պետք է լինի: Այդ կառույցներից շատերը նաև միջազգային կազմակերպությունների հետ կապեր ունեն, միջոցներ ունեն, իրենք նաև գումարներ են ներդրել, ինչու՞ չի կարելի նաև նրանց հետ համագործակցել՝ ավելի արդյունավետ դարձնելու հուշարձան-շենքի օգտագործումը: Ինչու՞ եք այդ առաջարկը միանգամից մերժել կամ այդ կազմակերպություններին տարածք հատկացրեք, որովհետև իրենք շատ կարևոր գործ են իրականացնում:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, որևէ մեկը հակառակը չի պնդում: Միգուցե շատ կարևոր գործ են իրականացնում, բայց այդ շատ կարևոր գործը կարելի է անել այս թանգարանային շենքից դուրս՝ մեկ այլ վայրում և եթե իրենցից դիմում լինի, մենք անպայման կվերանայենք այս հարցը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան:

Վահան Ավագյան

-Ուզում եմ, որ մեր բոլորի ուշադրությունը սևեռվի ասֆալտապատման աշխատանքների որակի, ոչ թե արագության վրա, քանի որ շատ տեղերում տեսել ենք, թե ինչ խորությամբ են այդ փոսերը փորում՝ վերականգնելու նպատակով: Հորդորում եմ կատարել աուդիտ՝ արդեն փոսալցման աշխատանքներ իրականացված տարածքներում և հասկանալ այդ արագության արդյունքն ինչն էր: Այնպիսի տպավորություն է, որ մենք փորձում ենք արագ ծածկել փոսերը, իսկ թե մյուս տարի ինչ կլինի՝ դա մյուս տարի կհասկանանք: Առաջարկս է՝ հասկանանք այդ կազմակերպությունը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հովանու ներքո է, թե՞ կկարողանանք ստուգել ու այդ հարցով զբաղվել շատ խիստ:

Ուզում եմ հիշեցնել, որ ս.թ. ապրիլի 24-ին մենք բոլորս գնալու ենք Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և այնտեղ կա մի լուրջ խնդիր: Դա Մարզահամերգային համալիրի հարակից տարածքի գետնանցումն է, որը գտնվում է անմխիթար, ոչ սանիտարական պայմաններում: Կխնդրեմ ձեռնարկել միջոցներ:

Հետաքրքիր առաջարկ ունեմ՝ այսօր շատ խոսեցինք խոցելի խմբերի մասին: Ես գիտեմ, որ տարբեր թաղամասերում կան անմխիթար վիճակում գտնվող քաղաքային գույքեր՝ տներ, նախկին հանրակացարաններ: Առաջարկում եմ վարչական շրջանների ղեկավարներին՝ գույքագրել վարչական շրջաններում առկա նմանատիպ շինությունները, փորձենք բարեկարգել և որոշ ընտանիքների տեղափոխենք այդտեղ՝ բնակվելու:

Տիգրան Ավինյան

-Ասֆալտապատման աշխատանքների վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Ասֆալտապատման աշխատանքների տեմպը համապատասխանում է բնութագրին ու պահանջներին: Տվյալ պարագայում որակի մասով խնդիր չի կարող լինել, քանի որ մենք բոլոր ասֆալտապատումների վերաբերյալ ստանում ենք նաև լաբորատոր ստուգումների արդյունքները: Դեռ մինչ օրս որևէ խնդիր չի արձանագրվել: Կարող ենք համատեղ այց կատարել, տեղում ծանոթանալ, որովհետև աշխատանքներն իրականացվում են այնպես, որ ճանապարհի մի մասը կտրվում է մինչև 4-5սմ խորությամբ և նախկինում արված կտրվածքի մասով, փոշեզրկումից հետո, կատարվում է ասֆալտապատման աշխատանքները: Աշխատանքները տեղում հսկում են տեխհսկիչը և քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

Տիգրան Ավինյան

-Մարզահամերգային համալիրի հարակից տարածքի գետնանցման վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Կամսար Բաբինյանի կողմից պայմանագիրը լուծելու վերաբերյալ, փաթեթը ներկայացվել է: Մենք ս.թ. մարտի 19-ին հայցադիմումը ներկայացրել ենք դատարան, կփորձենք հնարավորինս սեղմ ժամկետում հարցին լուծում տալ:

Վահան Ավագյան

-Արձագանքեմ. եթե այդպես ամեն ինչ լավ է, մենք կսպասենք արդյունքներին և եթե տվյալները կտարբերվեն լաբորատորիայի արդյունքներից, «Հանրային ձայն» խմբակցության որոշակի մոտեցումներ կփոխվեն:

Տիգրան Ավինյան

-Ես առաջարկում եմ Ձեզ, քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանի հետ շրջայց իրականացնել և արձանագրել, որ կան խնդիրներ կամ չկան:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան, խնդրեմ:

Հայկ Գրիգորյան

-Հարցս վերաբերում է մտահոգիչ մեկ միտումի: Լսել եմ, որ տարբեր վարչական շրջանների բակային հատվածներում ազատում եք 30-40 տարի առաջ զավթած համայնքային տարածքները: Խոսքը՝ մասնավորապես, վերաբերում է շենքերի առաջին հարկի հարևանների կողմից շենքի դիմացի զավթված հատվածներին: Բոլորը տեսնում են այդ տեսագրությունները: Հիմա սկսվում է հակառակ պրոցեսը՝ որոշ մարդիկ դիմում են «կանաչապատում» անվան տակ աշխատանքներ իրականացնելու համար և իրենց ուժերով ուզում են բարեկարգել տվյալ հատվածները: Այս ամենը դարձյալ բերում է ցանկապատումների և դառնում է կանաչապատ, ցանկապատված, զավթված տարածք: Հարցը գլոբալ առումով պետք է կարգավորվի և լուծում տրվի, որպեսզի սեփական ուժերով կանաչապատումը որևէ ձևով չհանգեցնի ցանկացած բարձրության, ձևի և չափի ցանկապատման:

Երկրորդ հարցը վերաբերվում է քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության նախկին պետ Յակով Ասատրյանին: Նա իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից: Շրջանառվող լուրերի համաձայն՝ նա դիմումը գրել է օդանավակայանում և Հայաստանի Հանրապետությունում չէ: Լուրեր կան նրա կողմից կատարված չարաշահումների վերաբերյալ:

Ցանկանում եմ իմանալ Երևանի քաղաքապետարանում կատարվել է արդյոք ծառայողական քննություն՝ Յակով Ասատրյանի գործունեության և պաշտոնավարման շրջանում կատարվածի վերաբերյալ: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունը շատ կարևոր կառույց է և ես՝ անձամբ 5-10 դիմում եմ ստացել Յակով Ասատրյանի պաշտոնավարման շրջանում կատարած անգործության կամ ոչ այդքան օրինական գործունեության մասին: Վստահաբար, Երևանի քաղաքապետարան բազում դիմումներ է մուտքագրվել:

Ուզում եմ իմանալ ի՞նչ գործընթաց է տեղի ունենում և ի՞նչ քայլեր են ձեռնարկվում վարչության նոր պետի նշանակման կապակցությամբ, քանի որ փետրվար ամսից վարչությունը ղեկավարում է վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը: Ցանկանում եմ հասկանալ ի՞նչն է խնդիրը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Գրիգորյան: Երևանի քաղաքապետարանում պարբերաբար տեղի են ունենում կադրային փոփոխություններ: Դրանք ուղղակիորեն կապված են այդ խնդիրների հետ և դրանցից բխող արդյունքներից բավարարված կամ չբավարարված լինելով: Որոշ դեպքերում արդյունքները բավարար չեն համարվում և տեղի են ունենում կադրային փոփոխություններ: Կադրային փոփոխությունների պատճառները տարբեր են լինում՝ կարող են աշխատանքից ազատվել իրենց դիմումի համաձայն, կամ փոփոխությունները տեղի են ունենում իմ կողմից նշված գնահատման մեխանիզմի արդյունքում: Ձեր կողմից բարձրաձայնած ասեկոսեներին չեմ ցանկանում անդրադառնալ, վստահ եմ, որ պարոն Ասատրյանը դիմումն այստեղ է գրել:

Երևանի քաղաքապետարանում պարբերաբար տեղի են ունենում կադրային փոփոխություններ և տեղի կունենան, եթե այն խնդիրները, որոնք դրել ենք մեր առջև և այն արդյունքները, որոնց պետք է հասնենք, այդ չափորոշիչներին համապատասխան չլինի: Հետևապես, այս գործընթացը շարունակական է:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից հնչեցված առաջին հարցին՝ խնդրում եմ կոնկրետ դեպք նշեք, կարող եք նաև տեղեկացնել ոչ հանրային ձևով: Խոստանում եմ, Ձեր կողմից մատնանշած ռիսկերի գոյացման դեպքում, նման բոլոր պրոցեսները կկանխարգելենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Սեդա Տեր-Մինասյան:

Սեդա Տեր-Մինասյան

-Առաջին հարցս հնչեցնեմ. ինձ համար շատ ուրախալի է, որ ավագանու շատ անդամներ անդրադառնում են Երևանի կանաչապատման խնդրին: Մյուս կողմից էլ դա բավականին տխուր փաստ է, քանի որ նշանակում է այնքան աղետալի է Երևանի կանաչապատման վիճակը, որ նույնիսկ Ձեր թիմակիցներն են ահազանգում, պարոն Ավինյան: Ձեր մոտ կայացած հանդիպման ժամանակ, որին ներկա էինք նաև մենք, Դուք հանձնարարեցիք քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Սիրարփի Հայկազյանին՝ ուսումնասիրել նմանատիպ կլիմա ունեցող քաղաքների կանաչապատման, ծառերի փոխարինման փորձը: Ցանկանում եմ իմանալ այդ ուսումնասիրություններն արվե՞լ են, թե ոչ և եթե արվել են, ի՞նչ արդյունքներ կան և որտե՞ղ կարելի է այդ արդյունքներին ծանոթանալ:

Երկրորդ հարցը. քանի որ բոլոր տեսաձայնագրություններն ուսումնասիրում ու համեմատում եք հակասությունները՝ մեր խմբակցության անդամների, ինձ շատ

հետաքրքիր է, Դուք երբևէ անդրադարձե՞լ, ստուգե՞լ ու համեմատե՞լ եք Ձեզ ներկայացվող, զեկուցվող փաստերի ո՞ր մասն է ճիշտ և ո՞ր մասն է սուտ: Օրինակ՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն պարոն Բեգոյանը վերջերս հաճախ բոլոր լրատվական միջոցներին ասում է, որ Եվրոպայում այլևս չեն տնկվում թեղիներ: Դա բացարձակ սուտ է: Ես նոր եմ վերադարձել Եվրոպայից: Եղել եմ եվրոպական 3 երկրում, որտեղ բոլոր մայթերին, ճեմուղիներին և այլ վայրերում տնկված են երիտասարդ, մանրատերև, գեղեցկագույն թեղիներ:

Տիգրան Ավինյան

-Տիկին Տեր-Մինասյան, ես ուզում եմ հիշեցնել, թե այդ քննարկման բովանդակությունն ինչի մասին էր: Դուք ասում էիք, որ կա «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ, բայց ՀՈԱԿ-ի ու նրանց հետ աշխատող 20 գիտնականի կարծիքը մի կողմ դնենք և փորձենք այլընտրանքային ուղղությամբ էլ հասկանալ խնդիրը: Այդ պատճառով տրվեց տվյալ հանձնարարականը բնապահպանության վարչությանը: Ուզում եմ Ձեզ հիշեցնել, որ այդ հանդիպումից հետո որոշակի քաղաքական գործընթացներ տեղի ունեցան, որոնք խախտեցին մեր պայմանավորվածությունների տրամաբանությունը: Ձեր խմբակցությունը որոշեց այլ ուղղությամբ գնալ: Դուք ունեք քաղաքական այդ իրավունքը և մենք չենք վիճարկում, բայց նաև, եթե համագործակցության տրամաբանությունը խզվում է մի կողմից, մյուս կողմից նույնպես խզվում է:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

Սիրարփի Հայկազյան

-Պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի անդամ, իրականում ուսումնասիրություն արվել է, փորձել ենք ուսումնասիրել նմանատիպ կլիմայական գոտիներ ունեցող այլ երկրների փորձը: Մի բան պարզ է, որ քաղաքային պայմաններում թույլ տալ մեզ այն, ինչ կարող ենք թույլ տալ անտառային պայմաններում՝ չենք կարող: Այսինքն՝ սպասել, որպեսզի ծառը հասնի իր ամբողջությամբ կենսունակության ավարտին և ընկնի, ինչպես կարող է լինել անտառում, քաղաքային պայմաններում չենք կարող ո՛չ մենք, ո՛չ էլ որևէ այլ քաղաք: Համենայն դեպս մեր ուսումնասիրությունը դա է պարզել:

Ինչ վերաբերում է թեղիներին՝ ոչ միայն այլ երկրների ուսումնասիրությունն է այստեղ հիմք ծառայել, այլ դեռևս 12 տարի առաջ քաղաքապետին կից գիտական խորհուրդ է եղել, որի նախագահն էր տիկին Կարինե Դանիելյանը: Կարծում եմ իր գիտական հմտությունները և ընդհանրապես նրա գիտելիքներն այսօրվա գիտական հանրության մեջ ոչ ոք կասկածի տակ դնել չի կարող, ինչպես նաև մի շարք այլ գիտնականներ, ովքեր դեռևս այն ժամանակ արձանագրել են թեղի ծառատեսակի խնդիրները և հենց այդ ժամանակ թույլատրել և շրջանառել են թեղիների խորը էտը: Բոլորին հայտնի է, որ խորը էտ

կատարելուց հետո հաջորդիվ քայլերը՝ հատումն է, ուղղակի երկարացնում ենք այդ գործընթացը:

Տիգրան Ավինյան

-Պարզաբանումներ կներկայացնի նաև «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Արմեն Բեգոյան

-Տիկին Տեր-Մինասյան, Վիեննայում, որ Դուք պեղել և գտել էիք թեղիներ, դրանք մանրատերևը չէին և տնկված էին ինչ-որ բակային տարածքում: Ժամանակն է ինչ-որ շենքերի բակային տարածքում տեղադրված թեղիները տարբերել մասսայական տունկից: Իրականում եվրոպական երկրների տնկարանները վաղուց թեղիներ չեն աճեցնում: Մի քանի անգամ մրցույթներ ենք հայտարարել և մասնակիցներ չենք ունեցել, կամ ունեցել ենք, սակայն չեն կարողացել մասնակցել և հայտնվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն՝ դրանից պետք է հետևություն անել, որ այո՛, եվրոպական տնկարաններում թեղիներ չեն մեծացնում, իսկ Վիեննայում ինչ-որ շենքի բակ էիք նկարել: Երևանում էլ, թեղիների հատման հետ զուգահեռ, կան անձիք, ովքեր իրենց բակում տեղադրում են երիտասարդ թեղիներ և Ձեր հարցադրումը տեղին չէր:

Սեդա Տեր-Մինասյան

-Որպես արձագանք նշեմ, որ նորից ճիշտ չեք ասում, պարոն Բեգոյան, որովհետև, այո՛, կար շենքի բակ և կար փողոց և միակ փողոցը չէր, որտեղ կային երիտասարդ, գեղեցիկ թեղիներ:

Ինչ վերաբերում է Ձեր ասածին, պարոն Ավինյան, ի՞նչ կապ ունի, եթե մենք բոյկոտել ենք որևէ հարց, նշանակում է Դուք ուսումնասիրությունը չպետք է կատարե՞ք: Եվ եթե կատարվել է ուսումնասիրություն, որտե՞ղ է, ես ուզում եմ ծանոթանալ այդ արդյունքներին, արդյոք Ալմա-Աթայի Տաշքենդում կամ որևիցե այլ տեղ այդպես ամբողջ փողոցի երկարությամբ արվել են ծառահատումներ: Կա՞ այդպիսի փորձ:

Տիգրան Ավինյան

-Այդ ամբողջ գործընթացը Դուք եք խնդրել և Ձեր պահանջով է իրականացվել: Մենք հարցեր այլևս չունենք: Գիտնականների հետ իրականացրել ենք աշխատաժողով: Տարիներ շարունակ գիտնականներն ասում են, որ բոլոր թեղիները պետք է փոխարինվեն Երևան քաղաքում՝ 20 տարվա ընթացքում:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսինե Սարգսյան, խնդրեմ:

Լուսինե Սարգսյան

-Առաջին հարցը վերաբերում է հանրակրթության ոլորտին: Խնդիրը եզակի չէ և շատ տեղերում կա նման խնդիր:

Հարցս հիմնված է Ավան վարչական շրջանում գտնվող հանրակրթական դպրոցից ստացած մտահոգիչ տեղեկատվության վրա: Այդ դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտը չափազանց լարված է՝ անհանդուրժողականությունը հասել է այն աստիճան, որ ուսուցիչը ստացել է ֆիզիկական վնասվածք և ծնողները ստիպված են երեխաներին տեղափոխել այդ դպրոցից:

Հարցս հետևյալն է՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչությունն ինչպիսի՞ գործառույթներ ունի Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներում այսպիսի խնդիրները կարգավորելու և դպրոցի ադմինիստրացիային անգործության համար պատասխանատվության ենթարկելու համար: Վերջերս ականատես եղանք, թե ինչպիսի ողբերգական իրադարձություն տեղի ունեցավ՝ այդպիսի մթնոլորտը չկանխարգելելու պատճառով:

Երկրորդ հարցը վերաբերում է ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտին: Հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ նախագծերում առկա ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացություններն ուսումնասիրելիս՝ նկատեցի, որ դրական եզրակացություններում հղում է տրվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին:

Իմ խորին համոզմամբ սա անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ, քանի որ հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կարող է ազդել շրջակա միջավայրի, այդ շրջապատում ապրող մարդկանց և ենթակառուցվածքների վրա:

Ուզում եմ իմանալ քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն ինչու՞ համապատասխան վերլուծություն չի զետեղել եզրակացության մեջ, որպեսզի ավագանու անդամներն ևս իմանան ռիսկերի գնահատման և դրանք հաշվի առնելու մասին:

Տիգրան Ավինյան

- Շնորհակալություն տիկին Սարգսյան: Առաջարկվող նախագծով, եթե ենթադրվում է իրականացնել 4-րդ ռիսկայնության կառուցապատում, ապա կազմակերպվում է քաղաքաշինական աշխատանքային խմբի քննարկում: Աշխատանքային խումբը բաղկացած է հինգ ճարտարապետից և նրանք վեց ամիսը մեկ, ռոտացիոն կարգով, փոփոխվում են: Ճարտարապետների կարծիքներն ևս ներառված են, որը կարող ենք տրամադրել Ձեզ: Պրակտիկայում ճիշտ կլինի, որ հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ ամրագրենք նաև աշխատանքային խմբի արձանագրությունները: Խոշոր կառուցապատողների վերաբերյալ հարցերի առկայության դեպքում կարող քաղաքապետի խորհրդական Աշոտ Շահբազյանի հետ քննարկել:

Նախքան Երևանի ավագանու նիստի օրակագում ընդգրկվելը, հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ նախագծերը բավականին քննարկվում են ոչ միայն ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում, այլև

կարծիքներ են ստացվում աշխատակազմի այլ վարչությունների (անշարժ գույքի կառավարման, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչություններ) կողմից: Այս գործընթացն այդքան էլ պարզ չէ, հարցը քննարկվում է նաև Քաղաքաշինության կոմիտեում: Ստացված կարծիքներից հետո, հարցը ներկայացվում է Երևանի ավագանու նիստի օրակարգ և տրամադրվում է ավագանու համապատասխան հանձնաժողովի քննարկմանը, այնուհետև քննարկվում է Երևանի ավագանու նիստում: Հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների գործընթացում առաջացած խնդիրները հիմնականում պայմանավորված են գլխավոր հատակագծի բացակայությամբ: 2020 թվականից այդ խնդիրն անընդհատ առկա է: Խնդիրը կայանում է նրանում, որ 2020թ. գլխավոր հատակագիծը բավականին արդի չէ, որի պատճառով անընդհատ իրականացվում է հողերի նշանակությունների փոփոխություն: Փաստացի ժամանակին Երևան քաղաքի որոշ հատվածներ պլանավորվել են որպես կանաչ տարածքներ, այժմ դարձել են բնակավայրեր: Բավականին թվով քաղաքացիներ դատարանի որոշումներով և վճիռներով ունեն սեփականության իրավունք և շատ քիչ անձինք դեռ սեփականության վկայական չունեն:

Անդրադառնամ նաև գլխավոր հատակագծին: Մինչև ս.թ. հուլիսի 1-ն ունենք ավելի պարզեցված տրամաբանությամբ ժամկետների մեջ իրականացվող գործընթաց: Գործընթացն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի և «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության կողմից: Կադաստրի կոմիտեն կադաստրային տվյալների՝ սահմանների, ինչպես նաև յուրաքանչյուր վարչական շրջանում ներքին սահմանների ճշգրտումից հետո, տվյալները ներմուծում է իր համակարգ, ներդնելու են GIS համակարգ:

Գործընթացի իրականացումը պատկերացնելու համար խնդրում եմ քաղաքապետի խորհրդական Աշոտ Շահբազյանին, կոնկրետ 4-րդ ռիսկայնության օբյեկտի օրինակով Ձեզ ներկայացնի այդ ամենը: Քաղաքաշինական տեսանկյունից վերջնական կարծիքը ձևավորվում է քաղաքաշինական աշխատանքային խմբում:

«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ տնօրեն Սարգիս Մանուկյանը կներկայացնի GIS համակարգում տվյալների ներդրման աշխատանքների մասին տեղեկատվություն:

Սարգիս Մանուկյան

-Այս պահին GIS համակարգում աշխատանքներն ակտիվ ներդրման փուլում են և Կադաստրի կոմիտեի տվյալների շտեմարանի հետ իրականացվում է ինտեգրացիայի գործընթացը:

Տիգրան Ավինյան

-Այսինքն Կադաստրի կոմիտեից ստանալու ենք տվյալների շտեմարանը և էլեկտրոնային եղանակով կադաստրային քարտեզների շտեմարանը մեզ մոտ նույնպես առկա՞ է լինելու:

Սարգիս Մանուկյան

-Այո՛, պարոն Ավինյան:

Լուսինե Սարգսյան

-Որպես արձագանք նշեմ՝ տեղեկացված եմ, որ բոլոր գերատեսչություններում այս հարցը քննարկվում է, ուղղակի ավագանու կողմից հարցն առավել բովանդակային հասկանալու և որոշում կայացնելու համար ավելի համապարփակ տեղեկատվություն է պետք:

Եզրակացությունները հասանելի լինելու դեպքում ավելի տեղեկացված կկայացվի որոշումները:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցի պարզաբանման համար խոսքը տրվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանին:

Մարգարիտ Խաչատրյան

-Տիկին Սարգսյան, Ավան վարչական շրջանի դպրոցում տեղի ունեցած միջադեպը, եթե ճիշտ եմ նույնականացնում, ապա 8-9-րդ դասարանների աշակերտների վեճն է եղել և ուսուցիչը՝ հաշտարարի դերում հայտնվելով, ստացել է վնասվածքներ: Վնասվածքը մեծ չի եղել, միջադեպը հարթվել է և ուսուցիչը լավ է:

Իհարկե, ունենալով 108.000 սովորող, պայմանավորված և՛ տարիքային առանձնահատկություններով, և՛ հասարակությունում առկա մթնոլորտով, հասկանալի է, որ պարբերաբար կարող են այդպիսի դեպքեր տեղի ունենալ:

Ինչ վերաբերում է քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության լիազորություններին և գործառույթներին, ապա նշեմ, որ վարչությունը հայտնաբերում, արձագանքում և կանխարգելում է, և այս տեսանկյունից ներկայումս շարունակվում են Երևանի ենթակայության 26 դպրոցներում (դպրոցներն ընտրվել են ըստ վերջին շրջանում տեղի ունեցած միջադեպերի) հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոնի մասնագետների մասնակցությամբ համատեղ կանխարգելման և հակազդման սեմինարների իրականացումը:

Լուսինե Սարգսյան

-Շնորհակալություն, ես անդրադարձա այս խնդրին, որովհետև ինձ հասած տեղեկությունների համաձայն՝ բավականին տևական ժամանակ է այս խնդիրը չի կարգավորվում և ուրախ եմ, որ կա գործառույթներ և միջոցառումներ իրականացնող:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Սարգսյան, տեղեկացնեմ, որ վերջերս որոշակի միջոցառումների շրջանակում տարբեր մանկապարտեզների և դպրոցների տնօրեններ ազատվել են աշխատանքից՝ ներառյալ Ձեր կողմից բարձրաձայնված խնդիրների հետևանքով: Այստեղ ուղղակի պատժի չափը պետք է համաչափ լինի և պետք է ճիշտ գնահատել, որպեսզի ավելորդ խստություն չկիրառվի: Մենք մոտ 20 մանկապարտեզի

տնօրենների փոփոխություն ենք կատարել, եղել են և՛ նմանատիպ դեպքեր, և՛ ոչ պատշաճ վերաբերմունք երեխաների նկատմամբ, և՛ նաև կոռուպցիոն որոշ դրսևորումներ: Այս տրամաբանությամբ պայմանավորված տեղի են ունեցել փոփոխություններ: Վերահսկողական տարբեր մեխանիզմներ պետք է ներդնենք, մասնավորապես՝ մանկապարտեզներում:

Տիկին Խաչատրյանը, ենթադրում եմ, արդեն իսկ աշխատում է այս ուղղությամբ և այդ վերահսկողական մեխանիզմների ներդրման դեպքում կարելի է ասել քաղաքապետարանն ամբողջական վերահսկողություն է ունենալու մանկապարտեզների գործունեության նկատմամբ: Կարելի է ասել, որ այս դեպքում զրոյի կձգտի երեխաների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան:

Ռոբերտ Ծովյան

-Առաջին հարցս վերաբերում է Մանկական երկաթուղուն: Շաբաթ օրը եղել ենք այնտեղ, չնայած, որ դեռ չի բացվել: Տարածքը գտնվում է վատ վիճակում ու երևի թե 20 տարի է ոչինչ չի արվել: Գնացքը շատ անմխիթար վիճակում է, նույնիսկ անվտանգության առումով: Այդ գեղեցիկ շենքը ևս գտնվում է անմխիթար վիճակում, աստիճանները վտանգավոր են, տարածքը՝ աղտոտված, աշխատակիցներից նկատեցի միայն ավտոկայանատեղիի հսկիչին, ով գումար էր գանձում: Հարցս հետևյալն է. մի քանի օր առաջ նկատեցի լուրերով, որ այն կազմակերպությունը, որ պարտավորվել էր ներդրում անել և բարեկարգել այդ տարածքը, հրաժարվել է այդ գործընթացից և ուզում եմ հասկանալ Մանկական երկաթուղու հետ կապված ի՞նչ ծրագրեր կան: Ամենացավալին ինձ համար այն փաստն էր, որ այդտեղ կար մեծ ֆուտբոլի դաշտ, որտեղ ես ևս ժամանակին ֆուտբոլ եմ խաղացել: Սակայն այժմ այդ ֆուտբոլի դաշտը դարձել է ավտոկայանատեղի:

Երկրորդ հարցս վերաբերում է արգելափակոցներին, մասնավորապես՝ Կենտրոն վարչական շրջանում: Անձամբ ես և մեր բակի բնակիչներն ունենք խնդիր: Մինչև ավտոկայանատեղիների վճարի թանկացումն էլ անհնար էր մեքենա կայանել մեր բակում, այժմ առավել ևս, որովհետև այն մարդիկ ովքեր այն ժամանակ կանգնում էին կարմիր գծանշումներով կայանատեղիներում, այժմ կանգնում են բակում: Այսինքն կարմիր գծանշումներով կայանատեղիներում ազատ տեղ կա, իսկ բակում՝ ոչ: Բոլոր բնակիչների համաձայնությամբ մենք գումար հավաքեցինք արգելափակոցներ ձեռք բերելու համար, դրանք տեղադրեցինք, հետո պարզվեց, որ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից եկել են՝ ապամոնտաժելու: Արգելափակոցը տեղադրելու համար անհրաժեշտ էր թույլտվություն: Մենք հասկացանք խնդիրը, համապատասխանեցրեցինք կարգին, ստորագրահավաք իրականացրեցինք և ես ներկայացրեցի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ: 10 օր հետո պատասխան ստացա, որ ավտոտնակների և բակում գտնվող շինությունների սեփականատերերը նույնպես պետք է համաձայնություն տան, բայց ամենակարևորն այն է, որ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի

աշխատակիցն ինձ տեղեկացրեց, որ եթե նույնիսկ շենքից լինի մեկ անձ, ով դեմ է, ապա արգելափակոցը պետք է ապամոնտաժվի: Ուզում եմ հասկանալ այս հարցի հետ կապված կա՞ արդյոք օրենքի նախագիծ, որով կկարգավորվի այս խնդիրը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Ծովյան: Այս խնդիրը մի քանի անգամ քննարկվել է: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծով այդ հարցի կարգավորումը ներառված է, սակայն մինչև այդ օրենքի նախագծի ընդունումը կխնդրեմ քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանին, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանին ձեռնարկել միջոցներ ժամանակավոր իրավական լուծումներ գտնելու համար, որը բակի բնակիչներին հնարավորություն կտա արգելափակոց դնելու և շահագործելու: Մենք ուզում ենք բեռնաթափել փոքր կենտրոնը և որպեսզի մեր ընդհանուր քաղաքականությունը և տրամաբանությունն ամբողջական լինի, հետևապես այս հարցին պետք է աջակցենք:

Ինչ վերաբերում է Մանկական երկաթուղուն, ապա տեղեկացնեմ, որ Մանկական երկաթուղու վարձակալներն սկզբում առաջարկել էին շատ խոշոր ներդրումային ծրագիր՝ շատ մեծ հյուրանոցային համալիրով, որը մերժվել էր: Հետագայում նրանք առաջարկել էին մի փոքր ավելի համեստ հյուրանոցային համալիր և մենք բանակցությունների ընթացքում արձանագրել էինք, որ նաև ճոպանուղի կկառուցվի դեպի մետրոյի նոր կառուցվող «Աջափնյակ» կայարան և այս համաձայնությունն ամրագրվել էր ՀՀ կառավարության որոշման նախագծով: Սակայն ավելի կարևոր առաջնահերթություն ունեինք, դա ամբողջ Հրազդանի կիրճի ռեկրեացիոն գոտի ճանաչելու գործընթացն էր, որի մասին տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Սիրարփի Հայկազյանը: Այդ նախագիծը, այն տրամաբանության մեջ, որով մենք առաջ ենք գնում՝ Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ տալու առումով, չէր համապատասխանում: Ինչ վերաբերում է, թե հետագայում ինչ կիրականացվի՝ երբ ընդունվեն որոշումները ռեկրեացիոն գոտու վերաբերյալ, արդեն այդ չափորոշիչներին համապատասխան կարող է իրականացվել ավելի համեստ ներդրումային ծրագիր, որը չի աղճատի ընդհանուր կանաչ միջավայրը և բնության այն փոքր կտորը, որ մնացել է Երևան քաղաքում: Եվ մենք հնարավորինս փորձելու ենք պահպանվող գոտիների տրամաբանությունը պահել:

Տիկին Հայկազյան կխնդրեմ ներկայացնեք տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

Սիրարփի Հայկազյան

-Նախորդ տարվա վերջից մեկնարկել է Հրազդանի կիրճին բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ շնորհելու գործընթացի համար պահանջվող ուսումնասիրությունը: Քանի որ ուսումնասիրությունը բազմաշերտ է և ներառելու է և՛

բուսական, և՛ կենդանական աշխարհը, և՛ այնտեղ գտնվող գույքերը, ռեսուրսներն ու հուշարձանները, պարտադիր էր, որ այն ներգրավի տարվա բոլոր սեզոնները: Ուսումնասիրության ավարտը նախատեսված է այս տարվա նոյեմբերի վերջը: Ուսումնասիրությունով մեզ տրամադրված նյութերը հիմք են հանդիսանալու ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմման համար և ուսումնասիրության արդյունքներից ելնելով նաև հնարավոր կլինի որոշել, թե բնության հատուկ պահպանվող ինչպիսի տարածք է լինելու: Այսինքն՝ դա լինելու է ազգային պարկ, թե այլ: Ընտրվելու է նախընտրելի կատեգորիան: Մինչ այդ աշխատում ենք քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հետ, որպեսզի կարողանանք սահմանափակում մտցնել, այսինքն՝ հատուկ պահպանվող տարածք սահմանել, որպեսզի այնտեղ գործող արդեն իսկ առկա կառույցները չկարողանան լրացուցիչ ընդլայնման աշխատանքներ իրականացնել:

Ռոբերտ Ծովյան

-Ընդլայնման հետ կապված նշեմ, որ հենց այն օրը, երբ եղանք Հրազդանի կիրճում, ռեստորաններից մեկը կառուցում էր ավտոկայանատեղի և իրականացնում էր ռեստորանի տարածքի ընդլայնման աշխատանքներ:

Քանի որ մանկական երկաթուղին գործելու է ս.թ. մայիսի 1-ից, հուսով եմ մինչ այդ կբարեկարգվի տարածքը: Շնորհակալություն:

Տիգրան Ավինյան

-Կխնդրեմ քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությանը սա ընդունել որպես ահազանգ և տեղում ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան: Խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Առաջին հարցս հնչեցնեմ. անձամբ այցելել եմ երկու վարչական շրջան, ծանոթացել եմ բնակիչների խնդիրներին: Մի հասցեն է՝ Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող Էրեբունի 1-ին թաղամաս, որտեղ չկար ջուր, գազ, բայց առաջնահերթ խնդիրն աղբահանությունն է: Թաղամասում ապրում է 70 տնտեսություն, ովքեր զրկված են աղբահանությունից և ստիպված են բակերում հողը փորելու և աղբը թաղելու այնտեղ: Այն մարդիկ, ովքեր ունեն սեփական մեքենաներ, փորձում են աղբը տեղափոխել այլ տարածք: Այդ ամենը կատարվում է իրենց երեխաների աչքի առջև, այնտեղ տիրում է հակասանիտարական վիճակ և երեխաները պետք է 3կմ գնան մինչև հասնեն դպրոցներ: Նրանց բարձրաձայնած առաջնահերթ խնդիրն այն է, որ լինեն աղբամաններ գոնե երեք փողոցներում: Այնտեղ ճանապարհը շատ վատ վիճակում է, խմելու ջրի խնդիր կա, նաև հողը սահող է, բայց նրանց ասելով՝ այս պահին հողը չի սահում: Անհրաժեշտություն կա փորձաքննություն իրականացնել՝ հասկանալու համար հողն այժմ սահում է, թե ոչ:

Երկրորդ հարցս վերաբերում է Նոր Նորք վարչական շրջանի Աշոտ Հովհաննիսյան փողոցի հ.16 շենքին, որտեղ խնդիրները բազմազան են: Սկսած շքամուտքից՝ աստիճանները խարխլված էին, հորդառատ անձրևների հետևանքով նոր տեղադրված վերելակը ջրով պատված էր: Բնակիչների կողմից կատարվել էին աշխատանքներ տանիքում, սակայն այնտեղ միայն մեկ ջրուղի էր աշխատում, որով ջուրը իջնում էր ներքև: Ժամանակի ընթացքում բնակիչներն իրենց ուժերով տանիքը վերանորոգել էին, ընթացքում թիթեղները շարքից դուրս են եկել և անձրևը լցվում է ուղիղ այն տանիքի վրա, որտեղ ջրուղիները խցանված են: Ջուրը բարձրանում և պանելներով է իջնում ներքև: Մենք ականատես եղանք այնտեղ, որ բնակիչներն ալպինիստներ էին հրավիրել, որպեսզի ճեղքերը սվաղեին և ջուրը չլցվեր բնակարան: Ջուրը իջնում էր մինչև 6-րդ հարկ:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Քոչարյան, իսկ այդ շենքն ունի՞ համատիրություն:

Արմեն Քոչարյան

-Այո՛, դիմել են համատիրություն և ստացել պատասխան, որ կդիմեն քաղաքապետարան:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

Հակոբ Բալայան

-Հարցը վերաբերում է Ջրաշենի այգեգործական տարածքին: Մինչև վերջին 2-3 տարին այնտեղ բնակչությունը սակավ էր, վերջին 3 տարում ավելացավ և դարձավ մոտ 70 տնտեսություն: Քանի որ այդտեղ տներ կային, սակայն բնակչություն չկար, ճանապարհ էլ չկար և վերջին 3 տարում մենք կարողացանք տաշվածքներով այդտեղ ստանալ ճանապարհ, քանի որ կավահող էր: Ոռոգման ջուր այնտեղ կա շաբաթական մեկ անգամ, խմելու ջուր և էլեկտրաէներգիա չկա: Աղբամաններ չենք դնում այնտեղ, քանի որ մեքենաները չեն կարող մտնել կավահողի մեջ, շրջադարձ կատարել: Մենք կքննարկենք «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրենի հետ, որպեսզի տեղադրենք աղբամաններ:

Տիգրան Ավինյան

-Այդ տները սեփականության իրավունքով բնակիչներին պատկանու՞մ են, թե ոչ:

Հակոբ Բալայան

-80 տոկոսը սեփականության իրավունք ունի:

Տիգրան Ավինյան

-Ամեն դեպքում պետք է լուծումներ գտնենք:

Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-Պարոն քաղաքապետ անպայման կուսումնասիրվի այս խնդիրը, թե ինչու է վերելակը պատված ջրի ծածկույթով, որվհետև դա տվյալ շենքի համատիրության՝ ի դեմս կառավարչի, սուրբ պարտականությունն է, տանիքը պետք է պահի նորմալ վիճակում և վերելակը միշտ լինի սարքին: Հարցը լրացուցիչ կուսումնասիրենք և կտեղեկացնենք:

Տիգրան Ավինյան

-Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Տիգրան Տեր-Մարգարյան, խնդրում եմ արձանագրեք Աշոտ Հովհաննիսյան փողոցի h.16 շենքի խնդիրները, ճշտեք, թե ինչու՞ չի կարողացել համատիրությունը լուծել և, եթե ֆինանսի խնդիր է, փորձենք հասկանալ, թե մենք ինչպես կարող ենք աջակցել, որպեսզի խնդիրները լուծվեն:

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց՝
Կազմակերպական վարչություն